




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# Ի Ր ՈՒԺ Ե Ր ՈՎ

ՊԻԵՍՍՈՆՈՎ ԳՈՐԾ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1931

891.74.2  
9-63

um.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 2

27 JUL 2006

179 NOV 2010

Ա. ԳԼԵԲՈՎ,

# Ի Ր ՈՒԺ Ե Ր Ո Վ

ՊԵՆ ՅԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Փոխադրություն Ա. Տ.-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ

1476



ՊԵՏՂՐԱՏ — 1981 — ՅԵՐԵՎԱՆ

13709-57

19.03.2013

70902

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՐԱՏԱՐ. № 1640  
ԳՐԱԹԵՊ. 6413(Բ)  
ՊԱՏՎԵՐ 2559  
ՏԻՐԱԺ 5000.

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. ՄԱՂԱԲ. ՉԱՐՉՅԱՆ, — բանվոր, 35 տարեկան:
2. ՄԱՆԱՆ, — նրա առաջին կինը, գեղջկուհի:
3. ՄԱԴԱԹ, — Մանանի հայրը: Գյուղացի 69 տարեկան:
4. ՍԻՐԱՆ, — Մաղաբի յերկրորդ կինը: Բանվորուհի, 22 տարեկան:
5. ՎՈՍԿԵՀԱՏ, — Սիրանի մայրը, 35 տարեկան:

Գործողությունը կատարվում է գործարանային  
հանրակացարանում:

Գործողության ժամանակը՝ մեր որերը:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Փոքրիկ ցած առաստաղով սենյակ գործարանի հան-  
րակացարանում: Լուսամուտ: Դուռ: Աջ կողմ մահճա-  
կալ, վրան բարձերի կույտ: Մահճակալի վերել կախ-  
ված է որոցք: Սեղան: Աթոռներ: Պատի ժամացույց:  
Սեղանի վրա ինքնայեռ:

### Տ Ե Ս Ի Լ 1

Յերեկոյան ժամը 9-ն է: Սենյակում վոչ  
վոք չկա: Հեռվից հնչում է կոմյերիտական  
յերգի և յերաժշտության ձայն: Դուռը զգու-  
շությամբ բացվում է և յերեկում է ՄԱԴԱԹԻ  
մորթի մեծ փափախով գլուխը: Մադաթը նախ  
մի վորոշ ժամանակ դիտում է սենյակն, ապա  
ներս է գալիս: Նրա յետեվից յերկշոտ ներս է  
մտնում ՄԱՆԱՆԸ, գրկին գույնզգույն կտոր-  
ներից կարած վերմակի մեջ փաթաթած յերե-  
խա: Յերկուսով ել հագնված են գլուղական  
տարագով:

*ՄԱԴԱԹ.— Փառք աստծու, հասանք... (խաչակնում  
է): Ես անխժած քաղաքում մարդի հողի դուրս  
կգա: Մինչեւ հասկանա ինչը ընչից ա, խեղճ  
եւ կորցնի դուրսն եւ հետը: Ես քեզ,— են վոնց  
ա, ավտոբէս ա, ինչ ա... Ես քեզ Ֆայտոնչին  
ա մեղդ վեր քաշում ու դրուտով վրեղ քշում...  
Մի հնարքով նրանից աղատվում ես, թուշում ես  
մի կողմ,— ալանջիդ տակին ավտոմոբիլն ա*

գողոցնում, քիչ ա մնում չունչդ կտրվի...  
Ես վո՛նց են մարդիկ ապրում քաղաքում...  
Հենց մենակ գողոցից ու դղրդոցից մարդ կը-  
գըծվի... Ափսոս չի գեղը: Սաղաղ ու հան-  
գիստ: Յերանություն ա:

ՄԱՆԱՆ.— Մեղուկը բերե՞մ:

ՄԱԴԱԹ.— Բեր: Երեխին ցած դիր: Վորտե՞ղ դնես:

ՄԱՆԱՆ.— Հայրիկ... որորո՞ց:

ՄԱԴԱԹ.— Ի՞նչ որորոց: (Նայում է) Հա՛: Որորոց:  
Դրուստ ա: (Նայում է որորոցի ներսը): Երե-  
խա կա մեջը քնած: Ո՞ւմ երեխեն կլինի: Վոնց  
վոր երեվում ա, ոթաղը մենակ Մաղաքինը  
չի. ուրիշի հետ կեսեկես են ապրում: Ինչ նեղ-  
վածք ա՛: Ահագին ժողովուրդ ա կիտվել քա-  
ղաքում: Հենց եղ ա, վոր կա: Երեխին դիր  
տեղաշորի վրա: Արաղին:

ՄԱՆԱՆ.— (Վայր է դնում յերեխային) Մեղուկը չը-  
գողանան: (Գնում է դեպի դուռ: Դիմաց  
դուրս է գալիս ՎՈՍԿԵՀԱՏԸ: Զարմանքով  
նայում է հյուրերին):

## Տ Ե Ս Ի Լ 2

ՄԱԴԱԹ.— Բարի իրիկուն ձեզ:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Բարով: Ո՞ւմ եք ուղում:

ՄԱԴԱԹ.— Չարչոնց Մաղաքը ըստեղ ա՞ ապրում:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Այստեղ:

ՄԱԴԱԹ.— Դե, փառք ասածու, վերջապես գտանք:  
Մանան, դու գնա: (Մանանը դուրս է գնում):

## Տ Ե Ս Ի Լ 3

ՄԱԴԱԹ.— Լավ ապրուստ ունեն քաղաքացիները...  
Իհարկե, գյուղում եսպես ապրել չի կարելի...  
Եստեղ ուրիշ ա: Պտտացնում ես վիճառը,—  
չըբըխի,— լույսը վառվում ա... Վոչ ծուխ

վոչ մուխ: Ծուռ ես տալիս մի ուրիշը,— ջուրն  
ա վաղում ինքն իրան: Ըստեղ կնկա համար  
դրախտ ա: Ասենք քաղաքում ապրուստը բոլո-  
րի համար ա հեշտ: Վերցնենք հենց բանվորին:  
Կանգնում ա ստանոկի առաջ, իրա համար հան-  
գիստ պապիրոս ա քաշում, իսկ ստանոկը նրա  
տեղ դործ ա շինում: Մենակ հարկավոր ա վա-  
րավուրդ անել: Համա գյուղական գործում  
ետպես չի. ենտեղ թե ձին, թե մարդը,— մեկ  
են: Ձին հալից ընկավ, յա թե, աստված չանի,  
սատկեց, ինքդ պրտի նրա տեղը լծվես: Բանա,  
վոր չլծվեցիր, վարդ ժամանակին չվարեցիր,  
աչունքին սոված կըլնդստաս: Են ել ասած,  
վոր բանվորի բժշկությունն ել ձրի յա: Դեղն  
ել տալիս են: Բայց մենք ամեն բան պետքա  
մեր փողով առնենք: Իսկ մեր ունեցած փողը  
ինչ ա,— մի մանեթ ու մի շահի, շատ անգամ  
ել ջերդ քամի... (Վոսկեսատը նրա խոսելու  
ժամանակ փորձում է ընդհատել, սակայն այդ  
նրան չի հաջողվում: Նրա դեմքի արտահայ-  
տությամբ սկզբնական հետաքրքրությամբ  
աստիճանաբար փոխվում է բարկության):

## Տ Ե Ս Ի Լ 4

ՎՈՍԿԵՀԱՏ.— Դուք ինքներդ վո՞րտեղացի յեք:

ՄԱԴԱԹ.— Մե՞նք,— զանգեզուրցի յենք: Մեր ունե-  
ցած հողը, ներողություն կանեք, հավի  
ծերտի չափ ա: Ութը չնչին իրեք դեսյատին  
ել չի ընկնում: Են ել շատ մասը քարքարոտ:  
Դե հրմի արի ու եղ հողից հաց հանի: Կայե-  
նի պես չարչարվում ենք, չարչարվում, վեր-  
ջը վերցրածներս ինչ ա,— վոտներ... Ու եղ-  
պես ապրում ենք խավարի ու կեղտի մեջ: Մի  
խոսքով, որը ցերեկին, վոնց վոր կես քըչեր:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ձե՛մ հասկանում, դուք Մաղաքի յեր-  
կրացի՞ յեք:

ՄԱՂԱԹ.— Յերկրացի՞: Հա, մի յերկրացի յենք:  
Ճիշտ ա: Մենակ թե ավելի մոտիկացի:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Գեռի՞ն եք: Բայց գուցե... Յես ել  
ինչե՞ր եմ ասում: Հայրն ե՞ք:

ՄԱՂԱԹ.— Յե՞ս: Հը՛ր՛ը՛... Նմանությունն կա՞:  
Մտնում ե ՍԻՐԱՆԸ ֆաղափացու հագուս-  
տով գեղեցիկ մի կին: Տեսքը հոգնած ու  
տանջված:

ՍԻՐԱՆ.— (Նկատելով անծանոթ մարդու) Բարեւ...  
ՎՈՍԿԵՀԱՏ.— Մաղաքն ո՞ւր ե: Նրա մոտ են յեկել:

ՍԻՐԱՆ.— Գալիս եր: Հիմի կգա... Դուք ի՞նչ գոր-  
ծով եք յեկել: Յես նրա կինն եմ:

Մաղաքը ֆար կտրած, աչքերը պլշած,  
բերնաքաց նայում ե նրան, առանց կարո-  
ղանալու վորեվ խոսք ասել:

ՄԱՂԱԹ.— Կի՞նը: Ինչպես ասացի՞ք:

ՍԻՐԱՆ.— Կինը, այո:

ՄԱՂԱԹ.— Ինչպե՞ս թե կինը:

ՍԻՐԱՆ.— Դուք, ինչ ե, քաղաքացի, կոնծե՞լ եք:

ՄԱՂԱԹ.— Չե՛... Սպա՛սի: Վո՞նց թե կինը: Ա՛յ քեզ  
ոյին: Բա Մանանը նրա ինչն ա:

ՍԻՐԱՆ.— Ի՞նչ Մանա ն:

ՄԱՂԱԹ.— Իմ հարազատ աղջիկը: Ժամ ու տերտերով  
պատկված: Ախր յես Մաղաքի աներն եմ: Հը՞:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ինչպե՞ս թե աները: Ի՞նչեր ես դուրս  
տալիս: Յես, վառք ասածո, խելքս դեռ չեմ կոր-  
ցրել: Յես ինքս նրա զոքանջն եմ, իմ աղջիկը  
ավել եմ նրան... Դու կատակը թող: Կատակի  
ժամանակ չի: Ծեր մարդ ես, քո տարիքին սաղ  
չի գալիս:

ՄԱՂԱԹ.— Ի՞նչ կատակ: Հրեն իմ սիրտը ընենց ա թըր-  
թոռմ, կասենաս մեկը սերկեվիլի ճիպոտով  
պինդ վրա եկավ... Թո՛ւ, չար սատանա: Սա  
ի՞նչ բան ա:

Դու ե գալիս Մանանի... երեսով սնդուկը:

## Տ Ե Ս Ի Լ 5

ՄԱՆԱՆ.— (Սնդուկը հատակին դնելով) Ո՛Ք... Ենքան  
բարձր ա... Շունչս կտրվեց:

ՄԱՂԱԹ.— Բարով արա, հիմար: Ահա սա իմ աղջիկը:

ՍԻՐԱՆ.— (Նկատելով անկողնու վրա դրած յերեսա-  
յին, վագում ե դեպի նա) Սա ո՞ւմ յերեսան ե:

ՄԱՆԱՆ.— (Նույնպես վագում ե դեպի յերեսան)  
Ո՞ւմ... Ի՞մ... (գրկում ե):

ՍԻՐԱՆ.— Իսկ հայրն ո՞վ ե:

ՄԱՆԱՆ.— Ո՛վ ե: Ջրի բերած չի՛, հայտնի յա: Իմ մար-  
դը,— Չարչոնց Մաղաքը:

ՍԻՐԱՆ.— Չարչո՞նց... Մաղա՞քը... Մայրի՛կ:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ո՛վ սուրբ կույս ասովածածին: Գուցե  
են Չարչյանը չի: Գուցե սխալ եք:

## Տ Ե Ս Ի Լ 6

Գալիս ե Մաղաքը: Նա յուղոտած արտիա-  
գուստով ե: Աշխատանքից հոգնած դեմք, մրից  
ու մեքենայի յուղից սեվացած: Տեսնելով Մա-  
ղաքին ու Մանանին, ֆարացած մնում ե տե-  
ղում կանգնած:

ՄԱՂԱԹ.— Մա՛նան:

ՄԱՂԱԹ.— Բարո՛վ, փեսա: Անպատելի յա՞: Հենց ի-  
մանըմ եյիր չենք կարա գանի՞: Վո՞նցն ա: Թո-  
ղել ա կնկան ու երեսին, ինքը շո՛ղջը բերանն ա-  
ռած,— հայդա: (Մանանը կարմրատակում ե)  
Լավ ես, չա՛տ լավ ես, խոսք չունեմ:

ՄԱՂԱԹ.— Դու, գիտես ինչ, Մաղաթ բիճա, եդ խոս-  
քերը քեզ համար պահի. ահա թե ինչ: Առաջ մի  
կարգին իմացիր, թե բանը ինչպես ե, հետո խո-  
սա: Ես գործում յես ինձ մեղավոր չեմ մտնում:  
Ես ե իմ խոսքը:

ՄԱՆԱՆ.— Բա երեսեն ինչո՞վ ա մեղավոր:

ՄԱՂԱԹ.— Յերեսան: (Նայում ե նրան) Տղա՞:

**ՄԱՂԱԹ.**— Յերկրացի՞: Հա, մի յերկրացի յենք:  
Ճիշտ ա: Մենակ թե ավելի մոտիկացի:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Քեռի՞ն եք: Բայց գուցե... Յես ել  
ինչե՞ր եմ ասում: Հայրն ե՞ք:

**ՄԱՂԱԹ.**— Յե՞ս: Հը՛ր՛ը՛... Նմանություն կա՞:  
Մտնում ե ՍԻՐԱՆԸ ֆաղափացու հագուս-  
տով գեղեցիկ մի կին: Տեսքը հոգնած ու  
տանջված:

**ՍԻՐԱՆ.**— (Նկատելով անծանոթ մարդու) Բարեւ...  
**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Մաղաքն ո՞ւր ե: Նրա մօտ են յեկել:

**ՍԻՐԱՆ.**— Գալիս եր: Հիմի կգա... Դուք ի՞նչ գոր-  
ծով եք յեկել: Յես նրա կինն եմ:

Մաղաքը ֆար կտրած, աչքերը պլշած,  
բերնաքաց նայում ե նրան, ասանց կարո-  
ղանալու վտրեվե խոսք ասել:

**ՄԱՂԱԹ.**— Կի՞նը: Ինչպես ասացի՞ք:

**ՍԻՐԱՆ.**— Կինը, այո:

**ՄԱՂԱԹ.**— Ինչպե՞ս թե կինը:

**ՍԻՐԱՆ.**— Դուք, ինչ ե, քաղաքացի, կոնծե՞լ եք:

**ՄԱՂԱԹ.**— Չե՛... Սպա՛սի: Վո՞նց թե կինը: Ա՛յ քեզ  
ոյին: Բա Մանանը նրա ինչն ա:

**ՍԻՐԱՆ.**— Ի՞նչ Մանա ն:

**ՄԱՂԱԹ.**— Իմ հարազատ աղջիկը: Ժամ ու տերտերով  
պատկված: Ախր յես Մաղաքի անեղն եմ: Հը՞:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ինչպե՞ս թե աները: Ի՞նչեք ես դուքս  
տալիս: Յես, փառք ասածո, խելքս դեռ չեմ կոր-  
ցրել: Յես ինքս նրա դոքանջն եմ, իմ աղջիկը  
տվել եմ նրան... Դու կատակը թող: Կատակի  
ժամանակ չի: Ծեր մարդ ես, քո տարիքին սաղ  
չի գալիս:

**ՄԱՂԱԹ.**— Ի՞նչ կատակ: Հրեն իմ սիրտը ընենց ա թըր-  
թռում, կսսենաս մեկը սերկեվիլի ճիպոտով  
պինդ վրա եկավ... Թո՛ւ, չար սատանա: Սա  
ի՞նչ բան ա:

Դու ե գալիս Մանանու, հերետով սնդուկը:

## Տ Ե Ս Ի Լ 5

**ՄԱՆԱՆ.**— (Սնդուկը հատակին դնելով) Ո՛Ք... Ենքան  
բարձր ա... Շունչս կարվեց:

**ՄԱՂԱԹ.**— Բարով արա, հիմար: Ահա սա իմ աղջիկը:

**ՍԻՐԱՆ.**— (Նկատելով անկողնու վրա դրած յերեխա-  
յին, վազում ե դեպի նա) Սա ո՞ւմ յերեխան ե:

**ՄԱՆԱՆ.**— (Նույնպես վազում ե դեպի յերեխան)  
Ո՞ւմ... Ի՞մ... (գրկում ե):

**ՍԻՐԱՆ.**— Իսկ հայրն ո՞վ ե:

**ՄԱՆԱՆ.**— Ո՛վ ե: Ջրի բերած չի՛, հայտնի յա: Իմ մար-  
դը, — Չարչոնց Մաղաքը:

**ՍԻՐԱՆ.**— Չարչո՞նց... Մաղա՞քը... Մայրի՛կ:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ո՛վ սուրբ կույս աստվածածին: Գուցե  
են Չարչյանը չի: Գուցե սխալ եք:

## Տ Ե Ս Ի Լ 6

Գալիս ե Մաղաքը: Նա յուղոտած արտիս-  
տանով ե: Աշխատանքից հոգնած դեմք, մրից  
ու մեքենայի յուղից սեվացած: Տեսնելով Մա-  
ղաքին ու Մանանին, ֆաթացած մնում ե տե-  
ղում կանգնած:

**ՄԱՂԱԹ.**— Մա՛նան:

**ՄԱՂԱԹ.**— Բարո՛վ, փեսա: Անսպասելի յա՞: Հենց ի-  
մանում ե յիր չենք կարա գտնի՞: Վո՞նցն ա: Թո-  
ղել ա կնկան ու երեխին, ինքը Է՛չքը բերանն ա-  
ռած, — հայդա: (Մանանը կարմրատակում ե)  
Լավ ես, չա՛տ լավ ես, խոսք չունեմ:

**ՄԱՂԱԹ.**— Դու, գիտես ինչ, Մաղաթ բիձա, եղ խոս-  
քերը քեզ համար պահի. ահա թե ինչ: Առաջ մի  
կարգին իմացիր, թե բանը ինչպես ե, հետո խոս-  
սա: Ես դործում յես ինձ մեղավոր չեմ մեռնում:  
Ես ե իմ խոսքը:

**ՄԱՆԱՆ.**— Բա երեխեն ինչո՞վ ա մեղավոր:

**ՄԱՂԱԹ.**— Յերեխա՞ն: (Նայում ե նրան) Տղա՞:

ՄԱԴԱԹ.— Աղջիկ: Անունը Սաթիկ ենք դրել:

ՄԱՂԱՔ.— Եդ յես չեյի խմանում:

ՄԱՆԱՆ.— Ձեյի խմանում... (Արտավուժ Ե):

ՄԱՂԱՔ.— Իհարկե... Ասենք ո՞վ դիտի... (Կասկածաբար նայում է Մանանին ու յերեխային):

ՄԱՆԱՆ.— Հը՞: Ի՞նչ: Ձլլի՞ ուզում ես ուրանալ:

ՄԱԴԱԹ.— Ձի՛ կարա: Յերեխի մի տարին թամամել, յերկուսի մեջ ա մտել... Բոլորը խմանում են: Սաղ դեղը կհաստատի:

ՄԱՂԱՔ.— Ա՛յ քեզ խաթաբալա...

ՍԻՐԱՆ.— Մաղաք, սա ի՞նչ է նշանակում:

ՄԱՂԱՔ.— Համբերիր, Սիրան: Յես ամեն ինչ կրացատրեմ:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Բացատրել են ժամանակ եր հարկավոր, յերբ աղջկաս համոզում եյիր հետդ ապրելու:

ՄԱՂԱՔ.— Տիկին Վոսկեսատ, ձեր մեջ ընկնելը բոլորովին անտեղի յե:

ՄԱՆԱՆ.— Դու ինձ են ապա, թե երեխին ո՞վ ա պահելու: Ես տարի բերքը պահաս ա, ապրուստ չկա:

ՄԱԴԱԹ.— Բոլորը, վոնց վոր կար, փթեց... Գարին ել, խոտն ել: Ութը ուտողի մնացել ա տասը փութ. վոնց պրտի բոլորին կերակրեմ: Յես սրանց մի սաղ տարի պահել եմ, ել չեմ կարա, ուժ չունեմ: Տանը ելի վեց հոգի կա նստած:

ՍԻՐԱՆ.— Մաղաք, ինչպե՞ս կարելի յե այսպես... Ինչո՞ւ յես ծածկել ինձանից: Վոչ մի խոսք չես ասել այդ մասին: Դոնե խմանա՛յի, դո՛նե հայտնի լինեք ինձ...

ՎՈՍԿԵՀԱՏ.— Հիմա ի՞նչ անենք: Խայտառակությո՛ւն:

ՍԻՐԱՆ.— Յես կհեռանամ: Այս բոպեյիս կհեռանա՛մ: Այլես վոտք չե՛մ դնի այստեղ...

ՄԱՂԱՔ.— Ո՞ւր ես գնալու: Ի՞նչ ես գտնում: Լա՛վ, չեմ ասել, չե՛մ ուզեցել զուր տեղը անհանգիստ անել քեզ... Մտածում եյի, վոր ենպես կանցնի:

ՄԱԴԱԹ.— Այսինքն ինչպե՞ս թե կանցնի:

ՄԱՂԱՔ.— (Սիրանին) Մեկ չի՞, են ժամանակ ասած թե հիմի: Փող կտամ, հարցը կլուծվի, կվերջանա: Ի՞նչ կա աղմուկ անելու:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ձե՞ վոր մարդիկ կխմանան: Մարդիկ ի՞նչ կասեն: Խայտառակությունը վոտղով ծածկել չի լինի:

ՄԱՂԱՔ.— Դուք ե՛լ, մամաչա: Ձեր բուրժուական նախապաշարմունքները ինձ համար ամենեվին հետաքրքիր չեն:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Բուրժուակա՛ն... Ի՛նքդ ես բուրժուական:

ՄԱՂԱՔ.— Դե վե՛րջ տուր. հերիք ելավ:

ՍԻՐԱՆ.— Ո՞ւմ վրա յես բղավում: Իմ մո՞ր: Դա յերպակաս: Յես քո յերեսին կթքեմ քո այդ նախալության համար: Ամեն ինչ կձգեմ, կհեռանամ. ապրիր ինչպես ուզում ես, ում հետ ուզում ես... Յես քո կենը չե՛մ այլես:

Ջղայնորեն կախարանի վրայից վերցնում է գանազան հագուստներ:

ՄԱՂԱՔ.— Ի՞նչ ես խենթ բաներ անում: Դե, ի՞նչ ես դիվահարում:

ՍԻՐԱՆ.— Յես քեզ նման սրիկային ճանաչել չեմ ուզում: Մի լավ մտածեցեք, թե ինչ ստորություն ե... Ամուրի յեմ, ասում ե, վոչ կին, վոչ յերեխաներ... Հիմի մեկն արդեն լույս ընկավ... Ով գիտի տասը հատ ել լույս ընկնի...

ՄԱՂԱՔ.— Սիրան:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ճշմարիտ ե... Վոչ խիղձ ունես, վոչ ամոթ... Որինավոր մարդը մի՞թե իրեն թույլ կտա այդպիսի բան:

ՍԻՐԱՆ.— Գնանք, մայրիկ: Յես առայժմ կմնամ քեզ մոտ, մինչեվ տեսնենք ինչ կլինի... Գնա՛նք: (Որորոցից վերցնում է յերեխային ու դուրս գնում):

ՄԱՂԱՔ.— Սիրան:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Վերջին մուրացկանն ել այդպիսի բան  
չի անի: (Ծաղրելով) Բուրժուական նախապա-  
շարժունքներ... Իրեն տեսեք: (Գնում է):

### Տ Ե Ս Ի Լ 7

ՄԱՂԱՔ.— Սա յեւ հո՛... Սիրա՛ն: (Վազում է նրանց  
յետեվից):

### Տ Ե Ս Ի Լ 8

ՄԱՆԱՆ.— Հիմի ի՞նչ անենք, հայրիկ: Յես աստեղ չեմ  
կարող մնալ... Յես կգնամ...

ՄԱԴԱԹ.— Ո՞ւր կգնաս:

ՄԱՆԱՆ.— Յես ել ինչացո՞ւ յեմ այստեղ... Նրանք  
տուն-տեղ են սարքել, երեխա ունեն... Յես ի՞նչ  
սլքաի անեմ... Վո՞րտեղ եմ մնալու: (Յերեխա-  
յին սեղմում է կրծքին և ուղղվում դեպի  
դուռը):

ՄԱԴԱԹ.— Ո՞ւր ես գնում ես քըչեր ժամանակ:

ՄԱՆԱՆ.— Գեղը... Տուն:

ՄԱԴԱԹ.— Տոմսակ ո՞վ կառնի: Փող վո՞րտեղից, հը՞:  
Յես ինձ համար հաղիվ առնեմ:

ՄԱՆԱՆ.— Վոտով կգնամ:

ՄԱԴԱԹ.— Ա՛յ քեղ ախմախ... Յերկու հարյուր  
վե՛րսա... Հասկանո՞ւմ ես ինչ ես ասում:  
Դուռմ:

ՄԱՆԱՆ.— Բարի մարդիկ կլինեն... տեղ կհասցնեն:

ՄԱԴԱԹ.— Վո՞նց չե, հըմի բարի մարդ կլանես բոս  
չե՛... Տանելը, ասենք թե, տարան, համա ո՞ւր  
տանեն: Տուն վոր գնացիր, ի՞նչ ես ուտելու:  
Նդ վո՞: ամբարներից եմ կերակրելու ձեզ բոլո-  
րիդ: Մարդ ունես, թո՛ղ նա յեւ քեղ տիրություն  
անի: Որենքո՞վ: Իսկ յես քեզ տուն թողնողը  
չեմ: Սա իմ վերջի խոսքն ա:

ՄԱՆԱՆ.— Բա ո՞ւր կորչեմ յես:

ՄԱԴԱԹ.— Նստի ըստեղ սնդուկի վրա ու մնա նստած:  
Նրա կի՞նն ես, թե չե: Ձի՛ կարող որինական  
կնկան կես քըչերին տանից դուրս անի: Հիմի  
եղ տեսակ վարմունքի համար իմանո՞ւմ ես ինչ  
կանեն: (Մոտենում է նրան և, դռան կողմը նա-  
յելով, ասում է կամացույց) Հիմար, յեթե դու  
միշտ նրա աչքի առաջը լինես, միենույն ա,  
չուտ թե ուշ, քու ասածը կանես, քու կողմը  
կքաշես նրան: Բայց վոր գնաս, հենց ես տեսակ  
եւ կմնա: Հասկացի՛ր:

### Տ Ե Ս Ի Լ 9

Դալիս է Մադաթը մոայլ, չաքացած: Բաք-  
կացկոտ հանում է վրայից յուզոտած բանկանն  
ու գլխարկը և նետում մի կողմ:

ՄԱՂԱՔ.— Վո՞ր սատանեն ձեզ բերեց: Ձեյի՞ք կարող  
նամակ գրել: Եսպես ու եսպես... Յես մի հինդ  
մանեթ կգզեյի, կուղարկեյի... Ձե՛, վեր են  
կենում ու գալիս: Սատանեն տանի բոլորիդ:

ՄԱԴԱԹ.— Դու սատանին հանգիստ թող: Ես տեսակ  
ժամանակ սատանի անունը լավ չի հիշել: Դու ես  
ասա, կնկադ ու երեխիդ ի՞նչ ես անելու:

ՄԱՂԱՔ.— Ի՞նչ կնիկ:

ՄԱԴԱԹ.— Որինական: Իմ աղջկան:

ՄԱՂԱՔ.— Կնկա սկլա՞դ ա ինձ մոտ, ինչ ա... Վորտե-  
ղից բերել ես, ենտեղ ել տար:

ՄԱԴԱԹ.— Եղպես հա՞: Իսկ յեթե յես նրան տանելու  
տեղ չունե՛մ: Յեթե ի՛մ ընտանիքը սոված նըս-  
տած ա... Խորամանկ ես, սիրելիս: Միայն թե  
յես քեզ ուղղակի կասեմ.— յես նրան ինձ մոտ  
չեմ ընդունի: Հասկացա՞ր: Ուզում ես փողոց  
քցել,— քցիր. իսկ յես նրան կերակրել չեմ կա-  
րող:

ՄԱՆԱՆ.— (Արտասվալից) Հենց իմանում ես վաղ կտա-  
յի քու յետեվից, թե վոր տանը ապրուստ լի-

նե՞ր: Ծայրահեղ կարիքից եմ յեկել... Որս խաղարեկ ա քու պատճառով: (Արտասվում է):

**ՄԱԴԱԹ.**— Եղ մասին հարկավոր չի բոլորովին խոսալ: Դու նրա մարդն ես թղթերով: Մարդը: Յերեխա ունեցել ես նրանից: Ունեցել ես: Պարտավոր ես նրանց պահել: Պարտավոր ես: Ուրեմն պահիր: Բայց վոր հակառակես, ես ժամանակ,— ես խաչը վկա,— քու սող ֆարրիկեն ընենց կխառնեմ, գլխիդ ընենց ոյին կսարքեմ, վոր ուրախ չես մնա: Հիմի եղտեսակ բաների համար խոսքը կարճ ա. ես սհաթին լեզուդ կղաղեն:

**ՄԱՆԱՆ.**— (Արտասվալից) Ես ի՞նչ անբաղդ մարդ դուրս եկա յես: Ուրիշների վիճակը ելի քչից— շատից մի բանի նման ա... Իսկ իմ ճակատին մենակ տանջանք ա գրած... մենակ կարիք... Գալիս եյի ուրախ—ուրախ ու միտք եյի անում, վոր ես ա, հիմի յես ել մի որ կանեմ: Չե՞ վոր մենք ապրել ենք միասին, Սաթիկը քու երեխեն ա: Իսկ դու մեզ փողոց ես քցում... Ես գիշեր ժամանակ... Կզնամ մաշինի տակ կնկնեմ... Թող վրովս անց կենա... Կասեմ մարդս եղ որին հասցրեց... Վերջին հուսահատության... (Արտասվում է):

**ՄԱՂԱՔ.**— Ի՞նչ ես դու յել կրակի վրա յուղ ածում: Յես քեզ ինչով եմ հուսահատության հասցրել: Թե վոր դու եղտեսակ ռամիկ չլինեյիր, թե վոր դու եղպես խաղար չլինեյիր, դուցե մենք մինչե հիմի ապրեյինք միասին... Ե՛, ինչ ասեմ: Ել չե՛մ սիրում, ահա բանը... Յես հո քեզանից կարած չե՞մ: Չե՞մ կարող չսիրել:

**ՄԱՆԱՆ.**— (Մաքրում է արցունքները, ամուր փաթաթում է յերեխային և ուղղվում է դեպի դուռը) Մնաս բարով, Մաղաք... Աստված թող քո արածների համար քեզ թողություն տա: Թող քո

Սիրանը յերեք են որին չհասնի, ինչ որի յես եմ... Մնաս բարով... (Բաց է անում դուռը):

**ՄԱՂԱՔ.**— (Հուզված) Սպա՛սիր: Կա՛յ: Ո՞ւր ես գնում: Հը՞, ո՞ւր: Իսկապես, յես խղճմտանք չունեմ, ինչ է: Քնիր հրեն ես անկյունում: Առավոտը կտեսնենք... Յած գիր յերեխային: Մնուկը են կողմը քաշիր: Հասկացիր բանի եյությունը... Փողի համար մի բան կանեմ: Սոված չես մնա...

**ՄԱԴԱԹ.**— Դա արդեն ուրիշ բան ա:

**ՄԱՆԱՆ.**— Ինձ քու փողը հարկավոր չի: Մի աշխատանք գտնեմ, ինձ հերիք ա: Քեզ նեղություն չեմ տա:

**ՄԱՂԱՔ.**— Գյուղում նստած շատ հեշտ եք մտածում: Յեկաք քաղաք թե չե, իսկույն աշխատանք ել տվեք, անկյուն ել... ամեն հարմարություն: Քաղաքում աշխատանք գտնելը գիտե՞ք ինչքան դժվար է: Մինչե մարդ աշխատանք է գտնում, սովամահությունից իրեն մսերն է կրծում:

**ՄԱԴԱԹ.**— Դու կոգնես: Սաղ քաղաքը քեզ հիմի ծանոթ ա: Ոտար մարդ հո չի՞: Հարազատին միշտ ել կարելի յա տեղավորել:

**ՄԱՂԱՔ.**— Այդ ձեզ մոտ է ալդպես հեշտ: Մեզանում կասեն խնամիություն է ու մեկ ել տեսար պատի թերթում գրեցին:

**ՄԱԴԱԹ.**— Սպասի... Դու նրան... ես ինք... չե՞ս ընդունում, վոր կինդ ա:

**ՄԱՂԱՔ.**— Վարպետ ես մարդ խեղդելու մեջ: Դո՞ւ վոնց, ընդունո՞ւմ ես:

**ՄԱԴԱԹ.**— Յես եսպես եմ կարծիք անում.— թե վոր, որինակի համար, մենք ըսենց, տանա—տանու խոսանք, վոնց վոր հիմի, հայտնի բան ա, ընդունում եմ... Բայց վոր աշխատանք գտնես, յա կամ մի բան սարքես...

**ՄԱՂԱՔ.**— Այն ժամանակ վո՞չ:

**ՄԱԴԱԹ.**— Հա, ի՞նչ կա, վոր:

**ՄԱՂԱՔ.**— Ճարպիկն ես:

ՄԱԴԱԹ.— Մե՛ծ բան ա, ինչ ա: Կնիկն ա, յա կնիկը չի: Հիմի ազատություն ա... Ասենք ինչ կարիք կա եղ մասին հիմի խոսելու: Թե բանը վոնց չուռ կղա, եղ հետո ինքներդ կտեսներ... Իսկ հիմի նշանակում ա...

Ներս Ե գալիս վոսկեհատը: Նրա դեմքը խիստ Ե ու սառը:

## Տ Ե Ս Ի Լ 10

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Ներողություն... (Շրթունքները պիրկ սեղմած) Սիրանը կանաչ չաչկան ուզում Ե: Խնդրեմ տաք:

ՄԱԴԱԹ.— Սա յա՞: (Սեղանի վրայից վերցնում Ե չաշկան ու տալիս Ե նրան) Ի՞նչ ժամանակների հասանք... Ընենց ա դուրս գալիս, վոր մենք, վոնց ասած... բարեկամներ ենք... խնամի... Յերկուսիս աղջիկներն ել, փառք աստուծո, կենդանի յեն: Սա յել մեզ փեսա յա դալիս... Հը՞: Դժվար հանելուկ ա:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Յես աշնպես եմ կարծում, վոր մենք չուտով թուրքի որենքի յենք փոխվելու: Մեկ կինը այժմ քիչ Ե, հարյուրներով են առնում:

ՄԱԴԱԹ.— Ե՛, ծածկելու ինչ կա... Քաղաքը միշտ եղպես ա: Մարդ ըստեղ ըսկի կարա՞ իրան հաշիվ տա: Ենպես են ես կողմ են կողմ վազվզում, կասես ցնորված ըլեն... Ով ո՞ւր ա գնում, ով ո՞ւր հետ ա ըլնում... Իսկական չան հարսանիք... Ըսկի կարելի՞ յա հետեվել:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Դուք ել լա՛վ եք. մեկդ մեկից պակաս չեք: Հիմի ձեզ մոտ՝ գյուղում ել աշնպիսի սանձարձակություն Ե տիրում, վոր տերը փրկի: Ձեզ ել ենք ճանաչում:

ՄԱԴԱԹ.— Վո՞նց ասած... Գյուղում ել կա, ճիշտ ա... Ե՛հ, չատ խոսացի. մաշինի գնալուն երկու սըհաթ ա մնացել: Կամաց-կամաց գնամ: Վաղ-

դալում մի քիչ կննջամ: Ուրեմն եղպես, Մանան: Մնա: Ձեզ բոլորիդ հաջողություն...

ՄԱՆԱՆ.— Հայրի՛կ:

ՄԱԴԱԹ.— Հը՞, ի՞նչ կա: Ա՛խ ես կնանիք: Կանֆետ մի տուր ուտեն, մենակ թող, վոր լաց ըլեն: Ընչի յես քոռանում, ախմախ:

ՄԱՆԱՆ.— (Մաքրելով արցունքները) Ո՞ւր ես ինձ մենակ թողնում:

ՄԱԴԱԹ.— Թե վոր հիմար չըլես, մենակ ել կապրես:

ՄԱՆԱՆ.— Հայրի՛կ: (Վազում Ե դեպի նա):

ՄԱԴԱԹ.— (Ձեռքը թափահարելով, շատապ գնում Ե դեպի դուռը) Սաղ ըլեք առայժմ... (Դռնից գլուխ Ե տալիս) Մնացեք բարով: (Գնում Ե: Մանանը կանգնած Ե, քաշկիմակի ծայրով մաքրելով արցունքները):

## Տ Ե Ս Ի Լ 11

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— (Մանանին) Մո՞տեմ եք: Այդպե՛ս:

ՄԱԴԱԹ.— Հապա ո՞ւր գնա: Փողոցում հո՞ չի քնի: Ձե՞ վոր իմ յերեխան Ե: Յեթե յես նրանց փողոց նետեմ, դործարանում ի՞նչ կասեն ինձ:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— (Շղթափոք) Ինչո՞ւ փողոց նետես: Թե վոր պարզ, բարեկամաբար ասեյիր, յես նրանց կտեղավորեյի ինձ մոտ:

ՄԱՆԱՆ.— Ինձ համար մեկ Ե... Չորս պատ ըլնի...

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Մի կերպ կհարմարվենք: Ձեզ համար ել լավ կլինի, նրանց համար ել... Իսկ աշնպես, իսկապես լավ չի: Գնանք ինձ մոտ... Սիրանին իսկույն կուղարկեմ դա:

## Տ Ե Ս Ի Լ 12

ՍԻՐԱՆ.— (Գալիս Ե) Չաչկան ի՞նչ յեղավ, մայրիկ: Քեզ լավ Ե մահի ուղարկի մարդ: (Խլում Ե նրա մեռից չաչկան):

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— (Նայում Ե նրան կշտամբական) Միշտ «Իր ումերսով» — 2



այսպէս ե... Չարչարվում ես, տանջվում ես,  
մտածում ես ինչպէս անես, վոր լավ լինի, իսկ  
դուք, կարծես չնեղ լինեք, այնպէս եք հարձակ-  
վում մարդու վրա: Մորդ մահ ես ցանկանում...  
Կմեռնեմ, չուտով կմեռնեմ: Յերկար չեմ ապ-  
րի... Այն ժամանակ ել վատ խոսք չես ասի...  
Անխիղճնե՛ր... (Գնում է մաքրելով արցունք-  
ները:

### Տ Ե Ս Ի Լ 13

ՄՅՆԱՆ.— (Մաղափին) Յես գնա՞մ:

ՍԻՐԱՆ.— Ո՞ւր:

ՄԱՆԱՆ.— Կանչեց իրա մօտ քնելու:

ՍԻՐԱՆ.— Ես ել քեզ նոր բան: Այնտեղ տեղ չկա: Յես  
ինքս կքնեմ այնտեղ:

ՄԱՂԱՔ.— Ելի ի՞նչեր ես հնարում:

ՍԻՐԱՆ.— Ինչ վոր հնարելու լինեմ, քեզ չեմ հարցնելու:  
Վորտեղ կամենամ, այնտեղ ել կմնամ: (Գնում  
է):

ՄԱՂԱՔ.— Սպա՛սիր: Սիրա՛ն... կա՛ց: (Վազում է նրա  
յետեվից):

### Տ Ե Ս Ի Լ 14

Մանանը մնում է մենակ: Տարակուսած  
չորս բոլորքը նայելով, արձակում է թաշկինա-  
կը, հանում է վերին հագուստը: Թաշկինակը  
գլխից վերցնելով, նույն դիրքով կանգնում է,  
անշարժ նայելով առջեվը: Աչքերը լցվում են  
արցունքներով: Նա անգիտակ նստում է սենյա-  
կի մեջտեղ դրված սնդուկի վրա և դեմքը թափ-  
ցնում թաշկինակի ծալքերում:

Նրա ուսերը ցնցվում են հառաչանքից:

### Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

### ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն սենյակը: Յերեք ամիս հետո: Առավոտ է: Աջ ան-  
կյունում յեղած մահճակալը և սենյակի ձախ անկյունը  
բաժանված են չթե վարագույրներով: Ժամացույցը  
ցույց է տալիս ժամը ինից փառորդ պակաս:

### Տ Ե Ս Ի Լ 1

Սիրանը, մաքուր հագնված, սեղանի մոտ շտապով թեյ  
է խմում: Ներս է գալիս Մաղափը, յերեսարբիչով մափ-  
րելով դեմքը: Նա շապիկով է, կիսահագնված և առանց  
սափրվելու: Սիրանը վեր կենալով սեղանից, մոտենում  
է հայելուն և մատները թփռելով, սարքում է մազերի  
խոպոպիկները:

ՍԻՐԱՆ.— Շա՞տ ես մ՛լուլ տալու: Իննից պակաս է քա-  
ռորդ:

ՄԱՂԱՔ.— Գործի չեմ գնալու:

ՍԻՐԱՆ.— Ինչո՞ւ այդպէս հանկարծ:

ՄԱՂԱՔ.— Հիվանդ եմ... Սիրտս խառնում է:

ՍԻՐԱՆ.— Անցյալ ամիս յերեք որ դործի չես գնացել:  
Այսօր ել այդպէս: Գիտեմ քո հիվանդութ՛յուն-  
նը: Ուզում ես Մանանիդ հեա մենակ մնա՞լ:  
Յեթե նա առաջին հերթում աշխատելու լիներ,  
քեզ այն ժամանակ զործարանից դուրս հանել  
չեր լինի:

ՄԱՂԱՔ.— Խոսում ես ու խոսում զուր տեղը:

**ՍԻՐԱՆ.**— Իհարկէ: Դու ամենքից խելոք ես: Յե՛վ ուզում ես յերկու ընտանիք պահել, և՛ ել պրոգնուլ անել:

**ՄԱՂԱՔ.**— Ի՞նչ յերկու ընտանիք: Ինչե՞ր ես դուրս տալիս: Յերեք ամսվա մեջ մենակ յերկու հնգանոց եմ տվել: Դա ի՞նչ խոսելու բան է:

Գալիս ե վոսկեհատը, ձեռքին սկուտեղի վրա դրած ամաններ: Ականջ ե դնում՝ նրանց խոսակցությանը, շրթունքները պիտի սեղմած: Ամանները դնում ե պահարանը:

## Տ Ե Ս Ի Լ 2

**ՄԱՂԱՔ.**— Նա ալիմենտի մասին չի յել ուզում լսել:

**ՍԻՐԱՆ.**— Ի՞նչ ալիմենտ: Հերեք չի՞, վոր աշխատանք գտար: Ալի՛մենտ...

**ՎՈՍԿԶԱՏ.**— Կնյազի աղջիկ ե... Յեթե դոնե քաղաքացի լինեմ, ելի ուրիշ բան ե, թե չե ամբողջ՝ կյանքը թրեքի մեջ ե անցկացրել, իսկ հիմի՛ Փասոն ե բանեցնում...

**ՄԱՂԱՔ.**— Մամաչա, լավ կանեք դուք այս գործի մեջ չխառնվեք: Քանի անգամ տեսել եմ:

**ՎՈՍԿԶԱՏ.**— Գոռողությանը տեսեք: Նա լավ ե իմանում ինչով քեզ իր կողմը քաշի: Տեսե՛ք, տեսեք, ալիմենտ չի ուզում, բայց...

**ՄԱՂԱՔ.**— Բայց ի՞նչ:

**ՎՈՍԿԶԱՏ.**— Մի գոռա ինձ վրա... Բայց ուզում ե ինքը տանտիկին դառնա:

**ՄԱՂԱՔ.**— Գնացե՛ք դուք ել... (Քեյ ե լցնում իր համար) Ավելի լավ ե ինքներդ հետեւեք ձեր տանը: Նրա անկյունը միշտ մաքուր ե, հալաքած սարքած, մարդու քեֆ ե գալիս մտիկ տալիս: Իսկ մեզ մոտ... Դրսից փայլում ե, իսկ ներսից, — ապականություն...

**ՎՈՍԿԶԱՏ.**— Ի՞նչ ապականություն: (Ձեռքերը միմյանց խփելով) Ա՛խ դու անխիղճ: Ա՛խ, ա՛խ, ա՛խ:

**ՄԱՂԱՔ.**— Ի՞նչ «ախ»: Չորս կողմը կեղտ ե: Լավ կանեք պոլի չոթք առնեք, քան թե Փասոն ծախեք:

**ՍԻՐԱՆ.**— (Այդ ընթացքում հագել ե վերակարկում և կապել թաշկինակը) Մաղաք, դու ինձ համբերությունից հանես: Յերրորդ ամիսն ե, յես կարծես կրակի վրա նստած լինեմ... Վոչ ցերեկը հանգիստ ունեմ, վոչ գիշերը: Դու ինձ այն ժամանակ ասացիր, վոր մի շարաթից ավելի չի մնա: Յես հավատացի ե հհեռացա: Բայց արդեն քանի շարաթ ե նա իմ լույսի առաջը կըտրել ե: Յես այլևս համբերողը չեմ: Թե վոր սիրելի չեմ քեզ, կհեռանամ: Առանց քեզ ել կապրեմ: Ահա թե ինչ:

Բարկացկոտ վարքում ե թաշկինակի ծայրերը, գնալով դեպի դուրս: Այն ժամանակ դուր ծեծում են: Սիրանը կանգ ե առնում, ատելությամբ նայելով դռանը:

**ՎՈՍԿԶԱՏ.**— Բարեհաճեց տիկինը:

**ՍԻՐԱՆ.**— Յես բաց անողը չեմ: Յես նրա աղախի՞նն եմ, ի՞նչ ե: Ինքը բաց արա:

**ՄԱՂԱՔ.**— Ե՛խ, ժանտախտներ... (Ձգայնորեն մոտենում ե դռանն ու բաց անում: Յերկու կանայք անհամբեր սպասում են: Մաղաքը վերադառնում ե, ձեռքին մի թուղթ):

**ՍԻՐԱՆ.**— Ո՞ւմն ե:

**ՄԱՂԱՔ.**— Քեզ չի, հայտնի յե: (Կարդում ե) Ընկեր Մանան Չարչյանին: Կեցցես, Մանան: Յերեք ամիս ե ինչ գյուղից յեկել ե, արդեն ծանուցագիր ե ստանում: Կնքած: Դու յել ստացիր ե՛:

**ՍԻՐԱՆ.**— Տուր տեսնեմ:

**ՄԱՂԱՔ.**— Ինչո՞ւ տամ:

**ՍԻՐԱՆ.**— Տուր, ասում եմ, Մաղաք:

**ՄԱՂԱՔ.**— Չեմ տա: Քոնք հո չի... Ում վոր ուղարկել են, նրան ել կտամ:

**ՍԻՐԱՆ.**— Այդպես, հա՞: Լա՛վ... Կփռձմանես, տես:

Ժամանակ չունեմ, առանց այն ել ուղացել եմ,  
թե չե քեզ հետ կխոսեյի:

**ՄԱՂԱՔ.**— Շատ պետքս ե քո խոսելը:

**ՍԻՐԱՆ.**— Տէ՛ս, Մաղաք: Յես քեզ ցույց կտամ, թե յետ  
ով եմ: (փախչում է):

### Տ Ե Ս Ի Լ 3

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Վոչ ամօթ ունես, վաչ խղճամասնք...  
(Մաղաքը խեք-խեք նայում է նրան, պնակից  
քեյ խմելով) Գիտե՞ս թե Սիրանը քեզ ինչպես  
է սիրում: Իմ կամքին հակառակ յեկամ քեզ,  
առանց յեկեղեցական որհնության... Դրա հա-  
մար ել ապրում եք գաղանների նման... Թե վոր  
դու խսկական տղամարդ լինեյիր, կարգ ու կա-  
նոնով կբաժանվեյիր նրանից ու կպսակվեյիր  
Սիրանի հետ, ինչպես հարկն է: Այն ժամանակ  
ձեր կյանքը ուրիշ կերպ կլիներ: Աստված վերե-  
վից ամեն ինչ տեսնում է, սիրելիս:

**ՄԱՂԱՔ.**— Յերեվի նեղացել է, վոր մաղարիչ չենք  
տվել, հա՞:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Թո՛ւ, անիծյալ անհավատ: Անաստված:

### Տ Ե Ս Ի Լ 4

Գալիս է Մանանը: Նա նիւարել է, յերակ-  
ները նկատելի դուրս են ցցվել, բայց աչքերում,  
շարժումների մեջ, բերանի ծալքերում ունի ինչ  
վոր մի նոր, հաստատկամ արտահայտություն:  
Հագած է նույն հագուստը, միայն գլխին կա-  
պել է կարմիր գլխակապ:

**ՄԱՆԱՆ.**— Բարեւ, տիկին Վոսկեհատ... Բարի լույս  
Մաղաք: Քեզ համար առավոտ է, իսկ ինձ հա-  
մար՝ իրեկուն: Հագիվ եմ կանգնում, ենքան  
եմ հոգնած:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Հապա դու կարծում եյիր քաղաքում  
մեղր են բաժանում:

**ՄԱՆԱՆ.**— Բանի դյուղում էյի ապրում, վոչինչ ել չեյի  
կարծում... Ասենք, հաղիվ թե մեզանում վորեւ  
մեկը իմանա, թե ինչքան դժվար է գործարա-  
նում աշխատելը: Ամբողջ որը կանգնիր ու մը-  
տիկ տուր, վոր շարունակի թելը չկտրվի: Բայց  
պիտի կանգնես քո սմենան, ամեն գիշեր,  
անքուն... Իսկ չորս կողմը դղրդոց, աղմուկ,  
ենպես, վոր մարդու ձայնը խլանում է, չի լըս-  
վում: Փոշի, տոթ, ծանր ող... Ո՛ր, անբախտ-  
ված: Շատ անգամ եմ հիշում դյուղը... Ինչ-  
պես խաղաղ ու հանգիստ ե եստեղ... Յերանու-  
թյունն է: Առավոտ մթնաշաղիին վեր ես կենում  
տավարի տակը մաքրելու, դուրս ես գալիս  
բախ... Յերկինքը պա՛րզ, — ողբ, — ինչպես  
կաթ... Լուռ ե չորս կողմը... Միայն թռչուն-  
ներն են ծղվում... (հոսելիս նա հանում է կի-  
սավերարկուն, ապա կարգի յե բերում մա-  
գերը):

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ինչ ասել կուզի, դյուղում հանգիստ է:  
Այստեղ մարդ հենց մենակ ոչերեգներից կգըժ-  
վի: Իսկ վոր մի հինգ տարի գիշերները աշխա-  
տես, արգեն բոլորովին տառեխ կգառնաս: Քա-  
ղաքը, սիրելիս, դյուղ չի, մարդու շուտ կմա-  
չի: (Հավաքում է քեյի բաժակները):

**ՄԱՆԱՆ.**— Վոտներս ծալվում են:

**ՄԱՂԱՔ.**— Թեյ ուզո՞ւմ ես:

**ՄԱՆԱՆ.**— Չե, Մաղաք... Մենակ քնել եմ ուզում,  
ուրիշ վոչինչ: Գլուխս բարձին դնեմ, մի քիչ  
քնեմ... Դու ինչո՞ւ գործի չես գնացել:

**ՄԱՂԱՔ.**— Այնպես... Առողջ չեմ:

**ՄԱՆԱՆ.**— Գոնե յերկրող հերթի գցեյին: Յերեկը ավե-  
լի հեշտ կլիներ:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ամեն մարդ հեշտի յետևից է վազում...  
Իսկ դժվարն ով անի:

**ՄԱՆԱՆ.**— Յես հո չեմ գանգատվում: Փառք աստուծո,  
վոր ես ել կա ու յերեխիս ել մտուր ընդունեցին:

Մտուրը վոր չլինէր, չեմ խմանում, թե յես ինչ  
էյի անելու:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— (Թեյի բաժակները շիջշիջոցով դնում ե  
պահարան) Մտուր: Մենք ձեզ մեծացրել ենք ա-  
ռանց մտուրներին: Կային այնպիսի մայրեր, վոր  
թխականի պէս պտույտ-պտույտ էյին դալիս  
իրենց յերեխաների գլխին, աշխարհում ամեն  
ինչ մոռացած: Իսկ ձեր ուշք ու միտքն այն է,  
վոր ծնելուց հետո, սպա՝ տաք մտուրում, բա-  
ղածի նման:

ՄԱՆԱՆ.— Ձուր եք այդպէս ասում: Հապա ինչ անենք,  
քանի վոր ինքներս ել աշխատում ենք: Թողնենք  
սենյակում անտեր-անտիրական, վոր ինձալիդ  
դառնան: Խուժանների նման բակերը դցե՞նք:  
Ձեր կարծիքով այդպէս ավելի լա՞վ է: Ինչ վոր  
չեք հասկանում, լավ ե այդ մասին չխոսեք:

ՄԱՂԱՔ.— Այ, դա ճիշտ խոսք ե... Իմ հողին հանել ե  
սա իր խոսքերով:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Ա՛խ, դու անամոթ:

ՄԱՆԱՆ.— Սկսեց կշկշալ թխականը:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Թո՛ւ, անհավատ:

ՄԱՆԱՆ.— Ճշմարիտ չե՞մ ասում, ի՞նչ: Հերի՛ք ե, ինչ-  
քան հավի նման ապրեցինք մենք: Մեզ ել հար-  
կավոր ե որ տեսնել, հասկանալ ինչը ինչից ե,  
մարդավայել կյանք անել...

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Տեսեք մի ինչ մտքեր ե անում: Ասացեք  
խնդրեմ:

ՄԱՂԱՔ.— Մանան, մոռացել էյի, քեզ ծանուցադիր են  
բերել: (Տալիս է):

ՄԱՆԱՆ.— (Հուզմունքից ու գոհունակութեամբ կար-  
մում ե: Անվարժ բաց ե անում տոմսը և սկը-  
սում ե կարդալ): Դեռ վարժ չեմ կարդում:

ՄԱՂԱՔ.— Սամվելյան Պետրոսը բերեց:

ՄԱՆԱՆ.— Հա... Կանանց ժողովի յեն կանչում: (Դըժ-  
վարութեամբ արտասանելով նոր արտասովոր  
բառերը) Դեղեղատների ակտիվի:

ՄԱՂԱՔ.— Տե՛ս մի: Ինչ խոսքեր ե սովորել: Ամեն բան  
խմանում ե:

ՄԱՆԱՆ.— Սովորելու յես շատ սեր ունեմ: Ընկերները  
սիրահոժար ողնում են: Շատ են աշխատում:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Անիծյալ լրբեր:

ՄԱՆԱՆ.— Ինչո՞ւ յեք հայհոյում: Յես ձեզ ի՞նչ եմ ա-  
րել, վոր շարունակ հարձակվում եք վրաս:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Ուրիշի կյանքն ես քայքայել, դեռ հարց-  
նում ե՞լ ես: Խիղճ չունես:

ՄԱՆԱՆ.— Ո՞վ ե քայքայել, յե՞ս:

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Հապա ո՞վ: Սիրա՞նը: Նա քո մասին  
հասկացողութուն ել չուներ:

ՄԱՆԱՆ.— Իսկ յես ինչո՞վ եմ մեղավոր:

ՄԱՂԱՔ.— Բալակա՛ն ե. հերի՛ք ելավ:

ՄԱՆԱՆ.— Տերը ձեզ հետ... Ձեզ թողնեն շարունակ  
մարդու շանթեր... (Անցնում ե վարագույրի  
յետեվ):

ՎՈՍԿԵ ՀԱՏ.— Ասածու անունը մի՛ տուր կարմիր  
գլուխ... (Հեռանում ե, բարկացած շրիկացնե-  
լով դուռը):

ՄԱՆԱՆ.— (Վարագույրի այն կողմից, նրա յետեվից)  
Ձե՛մ տա: Մեծ վնաս չի:

Մալաքը նստած սեղանի մոտ, լուռ ծխա-  
խոտ ե փաթաթում:

## Տ Ե Ս Ի Լ 5

ՄԱՆԱՆ.— (Վարագույրի յետեվից) Տեր աստված, մար-  
դիկ ինչքան շատ վոխ ունեն իրենց սրտում...

ՄԱՂԱՔ.— (Ծխելով) Իսկ դու մարդկանց մասին քիչ  
մտածիր:

ՄԱՆԱՆ.— Յես ժամանակ ունեմ նրանց մասին մտածելու:  
Իմ ցավ ու հոգսս ահա ե միայն, վոր մի կերպ սո-  
վածութունից չմեռնենք... Տանից վոչինչ չկա:  
Ամեն բան պետք ե փողով առնել: Գյուղում

հայ չկա, յեղածն ել մըրիկ ա ու չափաբար... Իսկ այստեղ ի՞նչ կա: Սառած քար ու յերկաթ... Մարդիկ ել բոլորը ոտար են, մռայլ, նրանք ել կարծես քար լինեն: Մեկ-մեկ մտիկ ես տալիս, տեսնում ես բոլորի հոնքերը կիտած, մռայլ, բոլորը վազում են, կոխ են տալիս միմիանց, շտապում են... Չկա հարազատ մի մարդ... Վոչ մի ծանոթ դեմք... Շատ անգամ մարդ նույնիսկ սարսափում ե... Միակ ուրախությունս այն ե, վոր լավ ընկերուհիներ ունեմ: Գնում ես կին-բաժին, — կարծես հարազատ տունդ լինի. մարդու սիրտ հանգստանում ե: Տեսնում ես, վոր այնուամենայնիվ մենակ չես, պաշտպաններ ունես: Մեզ նման թողած-մոռացածները թիվը շատ ե. միասին ալելի հեշտ ե ցալը քաշելը:

**ՄԱՂԱՔ.**— (Լոռաբյուրից հետո) Փողի կողմից վո՞նց ես:

**ՄԱՆԱՆ.**— Վո՞նց... Հորս խոսքը իմանում ես, — մի մանեթ ու մի շահի, շատ անգամ ել ջերդ քամի: Մինչև ոռձկի ոբը յերեք մանեթ ե մնացել: Բայց տասը որ պետք ե ապրել: Դե դնա ու ապրի:

**ՄԱՂԱՔ.**— Յես քեզ մի հատ հնդանոց կտամ: Կվերցնե՞ս:

**ՄԱՆԱՆ.**— Չե՛, չեմ վերցնի:

**ՄԱՂԱՔ.**— Ի՞նչ ես անխելքություն անում, Մանան: Ֆասոն բանեցնելը քեզ բան ես արել:

**ՄԱՆԱՆ.**— Ի՞նչ ֆասոնի բան կա: Ես անկյունի համար ձերոնց ձեռքին որ չունեմ, քիչ ե մնում քրքրեն. փողի համար հո սաղ-սաղ կուտեն... Յես ինքս ել չեմ ուզում:

**ՄԱՂԱՔ.**— Չե՞ս ուզում:

**ՄԱՆԱՆ.**— Ուզում եմ ինքս իմ ուժերով առաջ գնամ: Քանի ուժ ունեմ կաշիառեմ: Գուցե կառավարվեմ առանց քեզ:

**ՄԱՂԱՔ.**— Այ թե վոնցն ես դու: Չեսի իմանում, վոր այդ տեսակ ես:

**ՄԱՆԱՆ.**— Հապա ինչ գիտեիր: Յես միշտ այդպես եմ յեղել:

**ՄԱՂԱՔ.**— Իսկապե՞ս: Ճի՞շտ:

**ՄԱՆԱՆ.**— Դու ինձ բոլորովին չես ճանաչում:

**ՄԱՂԱՔ.**— Դու ինձ այդպես դուր ես գալիս... (Մանանը ծիծաղում ե) Աստված վկա: (Վեր ե կենում, մոտենում ե վարագույրին) Լսի՛ր, Մանան: (Յես ե փաշում վարագույրի ոտքը):

**ՄԱՆԱՆ.**— (Շտապով ծածկում ե վարագույրը: Մի ակնթարթ յերեկում եմ նրա մերկ թեկերը): Ո՞ւր: Չի՛ կարելի:

**ՄԱՂԱՔ.**— Գժու՞թյուն մի արա... Թո՛ղ:

**ՄԱՆԱՆ.**— Չեմ թողնի: Հեռացիր, Մաղաք:

**ՄԱՂԱՔ.**— Բաց թող:

**ՄԱՆԱՆ.**— Չե՛մ թողնի... Լսեցի՞ր:

**ՄԱՂԱՔ.**— Տեսե՞ք մի... վոնց ա... (Ուժով քաց ե անում վարագույրը):

**ՄԱՆԱՆ.**— (Դուրս ե գալիս վարագույրի յետեվից, կոնկերով արձակված կոփտայի կուրծքը) Ի՞նչ ես ուզում:

**ՄԱՂԱՔ.**— (Ուզում ե նրան գրկել) Յես քու մարդնեմ, թե վո՞չ:

**ՄԱՆԱՆ.**— (Արմունկներով յետ հրելով նրան) Վո՞չ:

**ՄԱՂԱՔ.**— Ինչպես թե վոչ: Բա Սաթիկն ո՞ւմ յերեխան ե: Ի՞մա չե:

**ՄԱՆԱՆ.**— Վո՞չ: (Շտապ կոնկում ե կնոպկաները):

**ՄԱՂԱՔ.**— (Վրա գնալով) Ինչե՞ր ես ստում, Մանան: Լո՞ւրջ: Ինչպե՞ս թե վոչ:

**ՄԱՆԱՆ.**— Շատ պարզ: Ի՞մա ե:

**ՄԱՂԱՔ.**— Գնա՛ դու յե: Մանան, ինչ ես հիմարություն անում: (Գրկում ե նրան: Նա արտեվանումները ցած թողած, յենթարկվում ե):

**ՄԱՆԱՆ.**— (Թույլ դիմադրելով) Մաղաք... լավ չի այսպես... Հոգնած եմ յես... Գիշերը չեմ

քնել... Կարծես տենդի մեջ լինեմ: Սիրում եմ քեզ... Հալ ու մաշ եմ յեղել, Մաղաք. կարոտել եմ քեզ...

**ՄԱՂԱՔ.**— Դե ել ինչ ես կոտրատվում, հը՞:

**ՄԱՆԱՆ.**— (Հանկարծ լայն բաց ե անում աչքերը, սեպեռուն նայում ե նրան յերկար: Նրա դեմքն ունի ցավի արտահայտություն: Թեվերի հանկարծակյան շարժումով յետ ե հրում նրան իրենից) Հեռացի՛ր:

**ՄԱՂԱՔ.**— Թո՛ւ, դիվահար:

**ՄԱՆԱՆ.**— Հեռացի՛ր ինձանից: Դու բարի մտքով չես մոտենում ինձ: Տեսնում եմ: Ամեն ինչ տեսնում եմ:

**ՄԱՂԱՔ.**— Անխելք ե՞ս, ինչ ե:

**ՄԱՆԱՆ.**— Կծիծաղես նորից վրաս ու առաջվա նման ելի բաց կթողնես: Յես իմ սերը պինդ հանդույց եմ արել: Թե վոր հանդույցը բացվեց, — կկորչեմ: Վշտից հալ ու մաշ կլինեմ... Յեթե դու մոտենայիր լավ մտքով, մարդու նման... սիրելով. Իսկ դու ուզում ես միայն զվարճանալ: Միանգամից յերկու կին ես ուզում ունենալ...

**ՄԱՂԱՔ.**— Թեկուզ հենց այդպես... Ձեզ ի՞նչ կա, — կպակսի

**ՄԱՆԱՆ.**— (Արտասպալից) Յես այդպես չե՛մ ուզում: Ձեմ կարող... Գուցե յես հիմար եմ, դուցե յես չեմ աճել մինչև ձեր հասկացողության, միայն թե չեմ կարող յես այդպես... Յես քեզ կըտամ ամեն ինչ... ամեն ինչ, հասկանո՞ւմ ես: Բայց դու յեկ պետի իմը լինես ամբողջովին: Իսկ այդպես ավելի լավ ե, հարկավոր չի բոլորովին:

**ՄԱՂԱՔ.**— Մանան, լսիր. յես քեզ մի անգամ ասել եմ, թե ինչու հեռացա, ինչու կապվեցի Սիրանի հետ:

**ՄԱՆԱՆ.**— Գիտե՛մ: Լսել եմ: Յես ուամիկ եմ:

**ՄԱՂԱՔ.**— Սպասիր:

**ՄԱՆԱՆ.**— Իսկ նա մետաքս չուլիկներ ե հագնում, տուֆլիներ, աղանջի ողեր ունի, մագերը խուճուճ ե արած, բերանը, աչքերը քսած... Գիտե՛մ:

**ՄԱՂԱՔ.**— Գուցե ե այդպես ե... Ի՞նչ կա այդտեղ... Հինգ տարի առաջ յես ել թաթով մարմինս եյի քորում, իսկ այժմ մաքրում եմ ատամներս, թատրոն եմ դնում, ժողովներ եմ հաճախում: Պարզ բան ե, վոր հիմի յես նոր բան եմ ուզում, նու, ասենք... զեղեցիկ բան...

**ՄԱՆԱՆ.**— Դրա համար հարկավոր ե կնոջից փախչե՞լ, մենա՞կ ձգել նրան:

**ՄԱՂԱՔ.**— Ի՞նչ կարող եյի անել: Հենց վոր նրան տեսա, իսկույն խելքս կորցրի:

**ՄԱՆԱՆ.**— Յես ել զեղեցիկ կլինեյի, յեթե լուսաբացից—լուսաբաց թոնրի չուրթին ու հողերի մեջ քարշ չգայի: Աշխատիր հապա դաշտում քափ ու քրտինք մտած, վաղ տուր կովերի յետեւից, — տեսնեմ զեղեցիկ թյունիցդ ի՞նչ կմնա...

**ՄԱՂԱՔ.**— Այդ յես գիտեմ:

**ՄԱՆԱՆ.**— Դու ինձ մի անգամ ժողովի տարե՞լ ես: Բացատրե՞լ ես ինձ, թե ինչպես պետք ե ապրել: Ձե՞ վոր խավարի մեջ եմ մեծացել. ցերեկ ժամանակ, ինչպես մուլթ գիշեր... Որը. որին ծխի ու մխի մեջ... Իսկ դու ինձ մի բանով ողնե՞լ ես: Գոնե մի խորհուրդ տվե՞լ ես: Ճանապարհ ցո՞ւյց ես տվել ինձ:

**ՄԱՂԱՔ.**— Այդ բանում յես հանցավոր եմ, Մանան:

**ՄԱՆԱՆ.**— Ամեն բանի ինքս իմ ուժերով եմ հասել: Ամեն բան ինքս ինձ եմ հասկացել: Յեվ դեռ չի կարելի ասել, վոր ամեն բան. մի կտոր միայն, մի փոքր մաս միայն: Բայց կհասնե՛մ, ամեն բան ձեռք կրերեմ, ամեն ինչ կիմանամ:

**ՄԱՂԱՔ.**— Իսկ Սիրանը վոչինչ չի ուզում իմանալ: Խոտի նման... Միացանք, կարծում եյի ըն-

կեր կլինի ինձ, կրարձրացնի ինձ, իսկ նրա մտքում միայն հազնվել-զարգարվել է: Շատ հիմար բան դուրս յեկավ:

**ՄԱՆԱՆ.**— Նշանակում է սխալվե՞լ ես: Այնտեղ կոր-  
ցրելի, այստեղ ել չգտար:

**ՄԱՂԱՔ.**— Նայած... Յես նրան սիրում եմ:

**ՄԱՆԱՆ.**— Սիրո՞ւմ ես:

**ՄԱՂԱՔ.**— Սիրում եմ, բայց կրկին ձգտում եմ քեզ...  
Սպասիր: Յես քեզ լուրջ եմ ասում, լավ մըտ-  
քով... Առանց չար դիտավորության:

**ՄԱՆԱՆ.**— Չե՛, Մաղաք... Թո՛ղ: Արի վերջ տանք այս  
խոսակցության: Բան դուրս չի գա: Ուզո՞ւմ  
ես ինձ հետ ապրել, միասին աշխատել,— ու-  
րեմն առաջ նրանից բաժանվիր: Իսկ այսպես յես  
չեմ կապվի: (Մաղաքը կանգնած է սեղանի  
մոտ, գլուխը կախ գցած, ապա աչքի տակով  
նայում է նրան, կարծես գնահատելով նրա ար-  
տափներ) Հը՞, ի՞նչ ես նայում: (Մաղաքը շա-  
րունակում է նայել նրան նույն ձեովով: Նրա  
շրթունքները քեթեվակի ծամածովում են:  
Մանանը կարմրում է, հուզվում է) Ի՞նչ: Հա-  
մեմատում ես նրա հետ: Գեղեցկությո՞ւնն ես  
համեմատում:

**ՄԱՂԱՔ.**— Ե՛ր... Թե վոր դու կիսով չափ նրա նման  
լինեյիր... Յես չեյի ել մտածի:

**ՄԱՆԱՆ.**— Ահա՛ թե ինչ: Շնորհակալ եմ, Մաղաք...  
(Խիստ) Ի՞նչ է, ուզում ես, վոր յես յերեխայիս  
քաղցած պահեմ ու ինքս դուրսվե՛մ: Յերեք  
մանեթով շա՛տ բան կառնես... Ե՛ր... Մա-  
ղաք... Ամո՛թ չունես դու: Ուղղակի անխիղճ  
մարդ ես... (Վնասաբար դառնալով, ուզում է  
անցնել վարագույրի յետով: Աչքերում ար-  
ցունքներ են փայլում):

**ՄԱՂԱՔ.**— (Վազում է դեպի նա, բռնում է ուսերից)  
Մանա՛ն:

**ՄԱՆԱՆ.**— (Արտասվալից) Բա՛ց թող ինձ: Թո՛ղ:

**ՄԱՂԱՔ.**— Շատ կամակորն ես դու... Այդպիսիներին  
յես սիրում եմ... (Գրկում է նրան: Մանան աշ-  
խատում է ազատվել) Դե, վոր այդպես է,  
յես քեզ հետ ուրիշ կերպ... (Պայքար):

**ՄԱՆԱՆ.**— Մաղաք, հեռացիր: Կաղաղակեմ...

**ՄԱՂԱՔ.**— Այ քեզ համառ կին... (Համբուրում է):

**ՄԱՆԱՆ.**— Մաղա՛ք...

## Տ Ե Ս Ի Լ 6

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— (Ներս է գալիս: Նկատելով տեղի ունե-  
ցածը, սառած կանգ է առնում քերանաբաց)  
Սա ի՞նչ բան է այստեղ:

Մանանը դուրս պրծնելով Մաղաքի գրկից,  
անցնում է մի կողմ: Նա ծանր շնչում է, ուղ-  
ղելով հագուստն ու մազերը:

**ՄԱՂԱՔ.**— Այ քեզ պատուհաս...

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Լա՛վ եք, շա՛տ լավ: Կինգ գնա աշխա-  
տանքի իո՞չ դու այստեղ սիրաբանություն ա-  
նես: Դու յե՛լ պակասը յես, դու յե՛լ լավ ես...  
Քեզ խղճացին, ապաստան տվեցին լակոտիդ  
հետ...

**ՄԱՂԱՔ.**— Ինչ ասացի՞ր: Ի՞նչ լակոտ:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Մի կատաղիր, վախեցող չկա:

**ՄԱՂԱՔ.**— Իմ աղջիկը լակոտ է, հա՞:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— (Աշխատելով նրանից բարձր բղավել)  
Այդպե՛ս ես լավության փոխարեն հատուցում:

**ՄԱՂԱՔ.**— (Վնասելով հատակին խփելով) Չե՛նդ:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Մի՛ դուռ: Գոռացողի՛ս տեսեք... Յես  
ամեն բան կպատմեմ... բաց կանեմ ձեր բոլոր  
արարքները: Յես ձեզ դատարան քարշ կտամ  
այդ տեսակ գործերի համար: Վորտե՞ղ ե աս-  
ված, վոր կարելի յե յերկու կնոջ հետ ապրել:  
Փաշա յե դառել գլխիս... Դատարանը քեզ կը-  
հասկացնի որենքը: Քեզ ել, սիրելիս, քեզ ել

կհասկացնի... Կիմանաս ի՛նչ է նշանակում ուրիշի ընտանիքը քայքայել:

**ՄԱՆԱՆ.**— Ինչո՞վ եմ քայքայել: Նա ինքն է կոչում ինձանից... Յե՞ս եմ նրա վզով ընկնում, ի՞նչ է: Տեր աստված... Յես միայն ուզում եմ, վոր ինձ հանգիստ թողնեն: Թողնեն պառկեմ, քընեմ մի ժամ, գիշերվա աշխատանքից հետո... Ի՞նչ էք միտս ուտում: Կարծում եք շա՞տ ուրախ եմ, վոր ձեզ մոտ եմ: Յեթե մի հավաքուն անգամ գտնեմ, յես մի րոպե չեմ մնա այստեղ... Ամբողջ ջղերս քայքայել էք, անիծված դազաններ... Վոչ խի՛ղճ ունիք, վոչ ամոթ... (Արտասվելով վագում է վարագույրի մյուս կողմը: Լսվում է նրա հառաչանքը: Մազաբը և վոսկեհատը շփոթված են):

**ՄԱՂԱՔ.**— Հը՞, ի՞նչ արեցիք: Մինչե՛վ ո՞ւր հասցրիք:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Յե՞ս արեցի: Յե՞ս: Դե սրան տեսեք... (Հասարակություն) Ինքը նրա հետ ապրի, յերեխաներ ունենա, մեղավորը յես գուրս գամ...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

### ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն սենյակը: Կրկին յերեք ամիս անց: Մարտի 8-ի առավոտյան: Կիրակի որ է: Ժամացույցը ցույց է տալիս ժամը 10-ը: Բեմի յետեվ լսվում է հեռավոր յերաժշտութուն:

Տ Ե Ս Ի Լ 1

Սենյակում վոչ վոճ չի յերեվում: Լսվում է Մաղաքի բարձրաձայն, յերկարատեվ հորանջը: Նրա և Մանանի սկզբնական խոսակցությունը կատարվում է վարագույրի յեջեվում, վորոնցով ծածկված են մահնակալները:

**ՄԱՂԱՔ.**— Մա՛նան:

**ՄԱՆԱՆ.**— Առ՛ւ:

**ՄԱՂԱՔ.**— Գնո՞ւմ ես:

**ՄԱՆԱՆ.**— Ժամանակ է: Պետք է ակումբը զարգարել:

**ՄԱՂԱՔ.**— Ինչո՞ւ կանաչը այժե՛ռի սիրում են այս ո՞րը:

**ՄԱՆԱՆ.**— Իսկ ինչո՞ւ չտիբենք, քանի վոր մեր տունն է:

**ՄԱՂԱՔ.**— Ուղղակի լվերի նման թռչկոտում եք: Սիրանին, վոր ուրիշ որ այս ժամանակ արթնացնել չի լինում, նա յեւ այսոր լույսը նոր բացված՝ չկա:

**ՄԱՆԱՆ.**— Այդպես էլ պետք է: Դրա համար էլ կանանց ո՞ր է:

**ՄԱՂԱՔ.**— (Դուրս է գալիս վարագույրի յետեվից, մարմինը կոտրատելով և հորանջելով) Կիրակի յե՛ւ...

**ՄԱՆԱՆ.**— Ավելի լավ:

«Իր ուժերով» — 3

ՄԱՂԱՔ.— Ի՞նչ ես անում այդքան:

ՄԱՆԱՆ.— Իսկույն: Թող մի բիշ գեղեցկանամ:

ՄԱՂԱՔ.— Տե՛սեք մի... Դու յե՛լ սկսեցիր... Այդպես  
այդպես... Տեսնե՛նք...

ՄԱՆԱՆ.— Յես բանվորական վարկ ստացա, դիտե՛ս

ՄԱՂԱՔ.— Իսկապե՛ս:

ՄԱՆԱՆ.— (Դուրս ե գալիս վարագույրի յետեվից) Այ-  
տես: Ամենամեղին հագուստն ե... Մի տարում  
պիտի վճարեմ մաս-մաս:

Մտալաք զարմանքից յետ-յետ ե գնում  
Բոլորովին Բաղաճնու նման հագնված, մագե-  
րը կտրած, կարմիր գլխարկով, Մանանը ք-  
վում ե բոլորովին փոխված ու յերիտասարդա-  
ցած:

ՄԱՂԱՔ.— Մա՛նահ... այդ դո՞ւ յես... Ա՛յ քեզ Մա-  
նահ... Ախ դու, ստաանի կեհիկ... Յես... Ա՛յ  
խեղբ, հապտ ինչո՞ւ ասաջ այդպես չեյիր հազ-  
նրվում:

ՄԱՆԱՆ.— (Գոհունակությունից կարմրում ե, առավ-  
գրավիչ դառնալով) Առաջ ինչո՞վ հաղնվեցի:

ՄԱՂԱՔ.— Ա՛յս դու... Գրողք քեզ սանի... Յես սամ-  
չում եմ կողքիդ կանգնել այսպես: Իսկա  
հաղնվեմ... (Անցնում ե վարագույրի յետև  
Մանանը զնգուն, յերիտասարդական ծիծաղ-  
բրջում ե): Այ քեզ Մանահ... Հիմի յես ի՞նչ  
անեմ, հը՞:

ՄԱՆԱՆ.— Կարծում ես քեզ համա՞ր եմ հաղնվել  
վո՛նց չե:

ՄԱՂԱՔ.— (Դուրս ե նայում վարագույրի յետեվի  
միայն մեկ թեվքը հագած) Հապտ ում համա  
Դու դիտե՛ս... Նայի՛ր...

ՄԱՆԱՆ.— Քե՞զ վրա նայեմ, ի՞նչ: Մի՞թե դու իմ  
մուսինն ես:

ՄԱՂԱՔ.— Հըմ... Ամուսինը,— ամուսինը չեմ  
բայց թույլ չեմ տա, վոր դուրս ընկնես... Հա-  
կացա՞ր:

ՄԱՆԱՆ.— Ասե՛մ ես, ելի: Դու ինչացո՞ւ յես: Այ քեզ  
նոր բան... Պահապանիս տեսե՛ք... Ձե՛, Մաղաք,  
քոնը յեղել ե, իսկ այժմ... քեզ անհաս ե:  
Ձեռքիցդ բաց ես թողել:

ՄԱՂԱՔ.— Մանահ, դու այդ լո՞ւրջ ես ասում:

ՄԱՆԱՆ.— Թեվք հաղիր, թեվք:

ՄԱՂԱՔ.— (Ուշքի գալով, հագնում ե մյուս թեվքը)  
Ասա՛ շուտ: Ո՞ւմ համար:

ՄԱՆԱՆ.— Ի՞նչը ում համար:

ՄԱՂԱՔ.— Հաղնվել ես... (Բռնում ե նրա թեվքը):

ՄԱՆԱՆ.— (Դիմանալով նրա սպառնական հայացքին)

Ա՛յ քեզ խենթ: Ի՛նչ համար... Տո՛նի՛ համար:

ՄԱՂԱՔ.— (Բաց ե քողնում նրան) Ֆո՛ւ... Բոլորովին  
կզժ վացնեք ինձ... (Դնում ե դեպի դուռ):

## Տ Ե Ս Ի Լ 2

Դռներում յերեվում ե ՄԱԴԱԹԸ: Նա հագ-  
նրված ե նույն սեվով, ինչպես առաջին գործո-  
ղության մեջ: Ձեռքին ումի խուրջին գյուղա-  
կան ընծաներով: Մանանը մեջքով կանգնած ե  
նրա կողմը և հայելու առաջ ուղղում ե մագե-  
րը ու գլխի քաշիկնակը: Մաղաք տեսնելով  
աներոջը, զարմանքից կանգ ե առնում անշարժ:  
Մաղաքը շփոթված դիտում ե սենյակը: Նրա  
ըրբունեքներին յերեվում ե անսխառ ժպիտ:

ՄԱԴԱԹ.— Բա Մանանը ո՞ւր ա:

ՄԱՆԱՆ.— (Արագ շուտ գալով) Հայրի՛կ:

ՄԱԴԱԹ.— Ա՛յ քեզ ոյին... Եդ դո՞ւ յես... Բոռացե՛ր  
եմ, ինչ ա... (Կանկաժոտ նայում ե նրան)  
Դրո՞ւստ դու յես, Մանահ: (Առաջանում ե նրան  
ավելի մոտ) Հրաշք ա՞...:

ՄԱՂԱՔ.— Սիրունացել ա, չե՞:

ՄԱԴԱԹ.— (Նայում ե նրանց բարեկացած) Բոլո՛րդ ել  
սիրուն եք... Հո քրանքախաջ հող վարել չի՞:

Մաշինեն աշխատում ա, խոկ-դուք ձեռներդ ծա-  
լած, չայ եք խմում: Իմանում ենք:

**ՄԱՆԱՆ.**— (Նրա խոսքերից ուղեղի ու ավելի մուսյլ-  
վում է) Շա՛տ բան ես իմանում:

**ՄԱՂԱԹ.**— Դրուստ չի՞:

**ՄԱՆԱՆ.**— Ինքդ մի աշխատիր աշատեղ, հետո լեզվիդ  
զուտ տուր: Գանի գյուղումն էյի, յես ել այդ-  
պես էյի մտածում: Բայց յերբ ինքս կանգնեցի  
ստանոկի առաջ, գիշերային հերթի, չորրորդ  
կարգով, նոր հասկացա, թե ի՞նչ է նշանակում  
դա:

**ՄԱՂԱԹ.**— Լեզվին մտիկ տուր. վոնց ա բլբլացնում:  
(Մաղաֆին) Սա ի՞նչ բան ա:

**ՄԱՂԱԹ.**— Սպասի դեռ, տես հլա ուրիշ վո՛նց ա ու-  
տացնելու: Նրա հետ հիմի կատակ անել չի լի-  
նի: Ակտիվ ա:

**ՄԱՂԱԹ.**— Ախր ես վո՞նց չուռ եկավ: Կես տարի չկա,  
վոր գեղից բերել եմ:

**ՄԱՆԱՆ.**— Մարդ վոչ թե կես տարում, այլ մի բուպե-  
յում կարող է փոխվել: Միտդ ե, վոր ինձ թո-  
ղեցիր սնդուկի վրա նստած ու ինքդ գնացիր:  
Հենց այդ բուպեյից ել չուռ եկավ: Անմիջապես  
վոտքի կանգնեցի:

**ՄԱՂԱԹ.**— Տեսնում եմ... Ենտեղ մենք հաց չուռենք  
ուտելու, խոկ դու աշատեղ գուղվում-ղարդար-  
վում ես: Մեր մասին չես մտածում:

**ՄԱՆԱՆ.**— Իսկ դուք իմ մասին չա՞տ եք մտածել:

**ՄԱՂԱԹ.**— Մե՛նք: Մենք մե՛ր մասին մտածելու Ժա-  
մանակ չուռենք... Դրությունն ենպես ա վոր...

**ՄԱՆԱՆ.**— Հապա յե՞ս պիտի ձեր բոլորի մասին մտա-  
ծեմ: Յերեխան ձեռքի՛ս: Մենա՛կ: Առանց տըն-  
տեսության, առանց վոչնչի: Վոչ անկյուն ու-  
նեյի, վոչ հագուստ... Վոչի՛նչ չկար: Ամբողջ  
գիշերները չեմ քնում, տանջվում եմ փոչու ե  
հեղատու ողի մեջ: Այդ բոլորը ձեզ համար վո-

չի՞նչ: Են վոչի՞նչ քեզ համար, վոր կուրծքս  
տախտակ է դառել, ցափում է:

**ՄԱՂԱԹ.**— (Ապշած նրա կրքոտությունից, տաքակու-  
սած տաքածում է քեղերը) Տեսե՛ք մի: Իսկ ես-  
տեղ ջուր բերո՞ւմ ես: Իսկ նավթ վոր չի լինում,  
մարխ վառո՞ւմ ես: Բա տավարին նայե՞լը:  
(Զգեղով նրա քեղերը) Բա սա ինչ ա՞:

**ՄԱՆԱՆ.**— (Մաղաֆին) Ա՛րի ու բան հասկացրու: (Հո-  
րը) Մի՞թե յես ասում եմ, վոր աշատեղ վատ է:

**ՄԱՂԱԹ.**— Ըհը՛... Յես ել եղ եմ ասում:

**ՄԱՆԱՆ.**— Ի՞նչ ես ասում:

**ՄԱՂԱԹ.**— Ինչպե՞ս թե ինչ:

**ՄԱՆԱՆ.**— Դու ի՞նչ ես ասում:

**ՄԱՂԱԹ.**— Թո՛ւ, բոլորովին չհիլացրիր... Գու ասա-  
ծը ի՞նչ ա:

**ՄԱՆԱՆ.**— Յես ասում եմ, վոր դուք նախանձում եք...  
Ձեր կարծիքով աշպես ե. — յեթե գյուղում  
մարխ են վառում, թող քաղաքն ել մարխ վառի:  
Դյուղում կծով ջուր են կրում աղբյուրից, թող  
աշատեղ ել աղբյուր լինի... (Մաղաթը շվարած  
նայում է փեսային):

**ՄԱՂԱԹ.**— (Աչքով անելով նրան) Տես, նա քեզ ընենց  
կնստացնի, վոր...

**ՄԱՆԱՆ.**— Իսկ իմ կարծիքով պետք է վոչ թե նախան-  
ձել, վոչ թե յես քաշել, այլ ինքքներդ նրան  
հասնեք: Ահա թե ի՛նչ:

**ՄԱՂԱԹ.**— Ծնորհակալ ենք քեզանից, աղջիկս... Ծնոր-  
հակալ եմ: Գնա ինքդ հասիր: Փորձ արա հա-  
սիր: Մենք ել մաթիկ կտանք, թե դու վոնց ես  
հասնում:

**ՄԱՆԱՆ.**— Յեղ կհասնե՛մ: Սպասիր, արձակուրդին  
տուն դամ, գյուղի բոլոր կանանց փոտքի յեմ  
հանելու: Յես յե՛ս չեմ լինի, յեթե արտել չը-  
կաղմեմ: Ձեզ գյուղացիներիդ քյոթուկի նման  
ամեն մարդ ես կողմ են կողմ է գլորում, վոնց  
վոր ուզում է: Բոլորդ ջոկ-ջոկ, ամեն մեկդ ու-

բիշ կողմ եք քաշում: Կարծես մտղի մէջ անո՞ծ խեղափարարս ըլեք: Իսկ կանայք ամէլի չուտ կհասկանան: Ժամանակ տուր, մենք լույս ել կանցկացնենք, սեպարատոր ել կառնենք... Ամբողջ գլուղը կփոխենք:

ՄԱԴԱԹ.— Շատ ես ճարտարացիլ... խոտք տակու չես թողնում: Լեզվանի յես դատել... Մի խոսքով,— ճառարխոս: Դու, աստված մի արնացե, հո կուտակցական չե՞ս:

ՄԱՆԱՆ.— Դեռ արժանի չեմ:

ՄԱՂԱՔ.— Կղամանա: Դու հանգիստ մնա: Դրան ել կհասնի:

ՄԱՆԱՆ.— Կհամանեմ: Ի՞նչ կա վոր:

ՄԱԴԱԹ.— Ա՛յ քեզ սյին...

### Տ Ե Ս Ի Լ 3

Ներս են գալիս Սիրանը և Վոսկեհատը. յերկուսով ել տոնական հագնված: Վոսկեհատը հագել է վերաքիւռ և գլխին ծածկել ժանեակավոր գլխաշոր: Սիրանի հագուստի մեջ նկատելի յե քաղցնեհական արտաքին շուք: Ներս մտնելով, յերկուսն ել զարմանքով նայում են Մանանին և Մաղաթին:

ՄԱԴԱԹ.— Բարով: Տաններդ չնորհավոր:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Բարով... Չեմ իմանում ինչպե՞ս կանչել ձեզ... Քավոր,— քավոր չեք, խնամի,— խոնամի չեք:

ՄԱԴԱԹ.— Ե՛հ, կանչելիս վո՞րն ա հրմի: Ո՞վ խոհապետ խնամի յեր, հիմի ել խնամի չի: Ամեն ինչ խառնվել ա:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Այդ մեկը ճշմարիտ է խոհապետ: Ճշմարիտ է:

ՍԻՐԱՆ.— Սա ի՞նչ է դատել մեր տունը, չեմ հասկանում: Տո՞ւն է, թե քարվանսարա:

ՄԱՂԱՔ.— Քարվանսարա չի, այլ ի՞մ տունն է: Հանվիր, խուրջինդ ցած դիր, աներ:

ՍԻՐԱՆ.— Յես քեզ համար յերկրորդ անգամ թե՛յ տաքացնողը չեմ:

ՄԱՂԱՔ.— Մի տաքացրու: Ինքներս կտաքացնենք:

ՍԻՐԱՆ.— Գնանք, մայրիկ, մենք աշտակ դործ չունենք:

ՄԱՂԱՔ.— Ո՞ւր եք դնում:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Այնտեղ, ուր դնում են բարեսեր մարդիկ կիրակի որը:

ՄԱՂԱՔ.— Սատանաներին դվարճացնելու:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ի՞նչ սատանա:

ՄԱՂԱՔ.— Սեվադլուխ:

ՄԱՆԱՆ.— Մաղաք, թող նրան:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Թո՛ւ: Ինչպե՞ս կարելի յե կիրակի որը աշտակաւ բերան քացել: Անհափա՛տ: (Մաղաթը ծիծաղում է):

ՍԻՐԱՆ.— Ծիծաղելու քան չիտ: Հիմարությունն է:

ՄԱՂԱՔ.— Իսկ ի՞մ կարծիքով յերեսունհինգ մանեթ ստանալով սեվադլուխ սատանաներին կերակրելն ավելի մեծ հիմարությունն է:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Տե՛ր աստված, սա ի՞նչ սրբապղծությունն է:

ՄԱԴԱԹ.— Դրուստ ա, դրուստ ա:

ՄԱՂԱՔ.— (Սիրանին) Իսկ դո՞ւ ուր ես դնում:

ՍԻՐԱՆ.— Յեկեղեցի, ո՞ւր:

ՄԱՂԱՔ.— Տերտե՞ր չես տեսի:

ՍԻՐԱՆ.— Շատ հարկավորո՞ւն քո տերտերները:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Դե, դե, եզ խոսքերը թող: Կսո՞ւմ ես: Անաստված ես գրվե՞լ, ինչ է:

ՍԻՐԱՆ.— Դուք ել, մայրիկ: Դուք հին կարգով ապրում եք, ապրեք: Իսկ ուրիշներն հետ դործ չունենք:

ՎՈՍԿԵՀԱՏ.— Ասացե՛ք խնդրեմ:

ՄԱՂԱՔ.— (Սիրանին) Դու խոհապե՞ս դնում ես յեկեղեցի:

**ՍԻՐԱՆ.**— Ի՞նչ կա, վոր: Գնում եմ մարդկանց տեսնեմ, ինձ էլ ցույց տամ:

**ՄԱՂԱՔ.**— Տեղ ե գտել իրեն ցույց տալու... Որինա-վոր մարդիկ գիտե՞ս հիմի վորտեղ են:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Գիտե՛նք, գիտե՛նք:

**ՄԱՂԱՔ.**— (Ձի լսում նրան) Ակումբում: Տանակատա-րությա՛ն:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Շա՛տ ենք լսել: Գլուխներս գնացել ե ձեր այդ տոներին:

**ՄԱՆԱՆ.**— Սիրա՛ն, ինչպե՞ս կարելի չե այսպիսի որը... Ձե՞ վոր այսօր բոլոր կանայք, ամբողջ գործա-րանն աշխատել ե: Մենտի հո մեզ մոտ չի այդ-պես, — բոլոր գլուխներում, բոլոր քաղաքնե-րում... Ոտար յերկրներում անգամ տոնում են այսօր:

**ՍԻՐԱՆ.**— Տոնում եք, տոներ:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ի՞նչ տոն... Հա՛վաքվելու յեն մի տասը րեղ նման մազը կտրած չաչանակներ ու սկսե-լու յեն լեզուներին դոռ տալ... Ընդհանուր խո-հանոց, ընդհանուր մսուր, ընդհանուր ամու-սիներ... Թո՛ւ:

**ՍԱՂԱՔ.**— Ի՞նչ եք հիմարություններ դուրս տալիս: Այդ ո՞վ ե ընդհանուր ամուսիններ ու դում:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Գիտե՛նք ով: (Ատելուր յամբ նայում ե Մանանին վտափից գլուխ) Ինչպես ե դարդար-վել... Ուրիշի անկյունն ե գրադեցնում, չոր հաց ե կրծում, բայց հագնվելուն տես...

**ՄԱՆԱՆ.**— Ձեզ ի՞նչ: Ձեր վիտղով հո չե՞մ հագնվել: Բանվորական վարկ եմ ստացել, հագնվել եմ:

**ՄԱՂԱՔ.**— Ի՞նչ կա դրանում վոր: Նայելն ել դուրե-կան ե:

**ՍԻՐԱՆ.**— Նայելուց դու արդեն կուրացել ես, տեսնում եմ... Նայիր ինչքան ուղում ես: Ու հաճությո-ւնեք: Իսկ մենք կանանք ասածուն աղոթելու: Քո ջգրու... Պատովիր:

**ՄԱՆԱՆ.**— Տեր աստված, այսպիսի որն անգամ մի-մյանցից ձեռք չեն քաշում. կրծում են իրար: Գոնե տոնին մեղքացեք:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Մենք ունենք մեր տոնը: Մենք ուրիշ-ների նման անգիտակից չենք... Մենք հավա-տում ենք ասածուն:

**ՄԱՆԱՆ.**— Դրա համար ել չների նման շարունակ կըր-ծում եք միմիանց: Ամբողջ գիշեր այսպես ե: Ձեն թողնում մարդ քնի:

**ՍԻՐԱՆ.**— Դե, դե: Վողորմությամբ ապրում ես, չե՞ս ել հավանում: Քո՛ւնը խանդարում են... Խա-նում — խաթունիս տեսեք...

**ՄԱՂԱՔ.**— Քո՛ թողնելով չի:

**ՍԻՐԱՆ.**— Ի՞նչ:

**ՄԱՂԱՔ.**— Քո թողնելով չի, ասում եմ: Կարիք չկա տրեմն ավելորդ խոսելու: Նա ինձ մոտ ե ապրում:

**ՍԻՐԱՆ.**— Դե ուրեմն ապրեցեք:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Անամոթներ:

**ՄԱՂԱՔ.**— Մամա՛չա, ավելի լավ ե դուք գնացեք, գիտե՞ք վորտեղ...

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ա՛խ տեր աստված:

**ՄԱՂԱՔ.**— Իսկ իմ աչքի առաջ մի ցցվեք շարունակ... Խայթում ե ու խայթում ոճի նման...

**ՍԻՐԱՆ.**— Իմ մայրը ոճ ե հա՞. իմ մա՞յրը: Իմ մորն այդպիսի խոսքեր ես ասում հա՞: Նորից սկը-սեցե՞ր:

**ՄԱՂԱՔ.**— (Մանանի ակնթիվ) Մանան, դու յել մի կողմից վրա տուր, տաքացրու: (Մանանը նրան դեմ ե հրում):

**ՍԻՐԱՆ.**— Ի՞նչ ասացի՞ր:

**ՎՈՍԿԵՀԱՏ.**— Ինչպես մոր հետ ե, այնպես ել աղջկա:

**ՍԻՐԱՆ.**— Անխղճմտանք, պրոգուլչչիկ, անգամ: Յես ամբողջ կյանքս դեհում եմ ընտանիքիս, աշխա-տում եմ, տանջվում, իսկ դու ինձ հետ այդպես ես վարվում: Գրողի ծո՞ցն ես ուղարկում: Իմ

յետեղից կո՞ւժ ես կտարելու, հա՞: Այդպիսի  
նախադրութեան համար յես քո... յես քեզ...  
(Հարձակվում է նրա վրա, կամենալով խփել):

ՄԱՆԱՆ.— (Բռնում է նրա քեզը) Հանգա՛րա:

ՄԱՂԱՔ.— Թո՛ւ... ախմախ:

ՄԱՂԱՔ.— (Կատալելով) Կոխի՛կ ես տնում, հա՞: Վոր  
այդպես է, յես քեզ ցույց կտամ: Յես քեզ...  
(Հարձակվում է Սիրանի վրա):

ՄԱՂԱՔ.— Եղպե՛ս, եղպե՛ս... Ըհա...

ՎՈՍԿԵՀՍՏ.— Սպանո՛ւմ ե, սպանո՛ւմ ե... Ոգնեցե՛ք...  
Ոգնեցե՛ք, կտառե՛ն: (Դուրս է վազում սենյա-  
կից):

#### Տ Ե Ս Ի Լ 4

ՄԱՆԱՆ.— (Բռնում է Մալախիին) Ձե՛մ թոցնի: Թույլ  
չե՛մ տա... Լսո՞ւմ ես: Հես պատգամավորու-  
հի յեմ:

ՄԱՂԱՔ.— Ես տեսակ ել հիմար կնի՛կ...

ՄԱՆԱՆ.— Թույլ չե՛մ տա կնոջ ձեռնի: Այն ել կանանց  
որը... Դատարան քարշ կտամ:

ՍԻՐԱՆ.— Կո՛րի: Յերկու չուն, յերբ կովում են, յեր-  
բորդը զործ չունի... Պատգամավորուհի՛ր...

ՄԱՆԱՆ.— Իսկապե՛ս վոր չնե՛ր: Այսպիսի՞որ կոխի՛կ են,  
զցում: Թո՛ւ:

ՍԻՐԱՆ.— (Վառք հասակին խփելով) Հեռացի՛ր...  
Գիտեմ ի՞նչ պատգամավորուհի յես: Գիտեմ  
ինչ ես ուզում:

ՄԱՂԱՔ.— Ո՛ր, սիրտս բարախում ե... Սա ի՞նչ կյանք  
ե... Անիծվի՛ աշտեսակի կյանքը... (Նստում  
է աթոռին, սեղանի մոտ):

ՄԱՆԱՆ.— Այլանդակ մարդիկ եք դուք, ահա թե ինչ  
Ամբողջ դործարանը տրախութեան մեջ է, առ-  
նում են, իսկ դուք աշտեղ ըորբոսի նման  
կպել եք անկյուններին... Ձեր միակ տրախու-  
թյունը միմիանց միմեմեն է... Վոչինչ հար-

կարվոր չե ինձ աշտեղ, հասկանում եք, միայն  
թե ձեր զգվելի գեմքերը հոսանեմ, ի՛մ ճանա-  
պարհով գնամ (Հուզված անցնում վարա-  
գույրի յետեղ, հազիվ զսպելով արտասուք):

ՍԻՐԱՆ.— (Նրա յետեղից) Դե վոր այդպես է, հեռա-  
ցի՛ր: Թող վոր ուրիշները տարեն:

ՄԱՂԱՔ.— Դու մի ի՛նձ հարցրու, յես ուզո՞ւմ եմ քեզ  
հեռա՞նք:

ՍԻՐԱՆ.— Հենց կարծում ես լա՞ց կլինեմ: Ապրիք  
պատգամավորուհու՜ հեռ... Գուցե նա  
քեզ կզոհացնի... Իսկ յես կթքեմ աշտեղի  
կյանքի վրա ու կհեռանամ: Կապրեմ վարպետ  
Սողոյի հեռ... Կփոխադրվեմ նոր բնակարան,  
վաննայով... Մորթե չուրա կարել կտամ...

ՄԱՂԱՔ.— (Գլուխը քափահարելով) Զահեչե՛ր եմ  
ա՛սել, ե՛ր...

ՄԱՂԱՔ.— Գնա՛: Միայն թե, տես, յես չդատնաս:

ՍԻՐԱՆ.— Կփռվանես, Մաղաք: Յես լուրջ եմ ասում:  
Յեթե գնացի, ընդմիջո կզնամ:

ՄԱՂԱՔ.— Թեկուզ գեանի սակն անցիր:

ՍԻՐԱՆ.— Այդպե՛ս ուրեմն, այդպե՛ս: Խոսք մեկ եք  
տրել, հա՞: Դե լա՛վ: Յես քեզ դատարան քարշ  
կտամ... Այլմենա՞ կվճարես... Այն ժամա-  
նակ միտղ կզցես: (Հեռանում է):

#### Տ Ե Ս Ի Լ 5

ՄԱՂԱՔ.— Հազիվ պատգեցինք, ե՛լի:

ՄԱՂԱՔ.— Հո՛, հո՛, հո՛... Դռնող աղա յես, յես ու իմ  
աստվածը: Վոնց վոր ցերկում... Դորթ-  
դրթ, — ու... չկա:

ՄԱՂԱՔ.— Դու ծիծաղում ես, իսկ յես, աստված վկա,  
են որին եմ, վոր մենակ մնում է կախվելը: Նա  
ե՛լ կեղեցիկ է, ե՛լ ամեն ինչ... Բայց արի  
տես... բան դուրս չի դալիս. ինչ ուզում ես,  
արա:

ՄԱԴԱԹ.— Յերեմիամ ա:

ՄԱՂԱՔ.— Իսկ Մանաօնը... Թե վոր նա ստաջուց  
հիմիկիմ նման լիներ, մի՞թե յես կհեռանայի..

ՄԱԴԱԹ.— Բոլորս եղպես ենք, առաջ անդա յենք քա-  
չում, հետո չափ ուձեւի անում: Են ել ա-  
սած, վոր ամեն ինչ ասածու ձեռքին ա. բո-  
լորս նրա հովանու տակ ենք ապրում: Ենպես  
վոր մտիկ ես տալիս, թվում ա, թե տանջանք  
ա, բայց, վոր միտք ենք անում, տեսնում ենք,  
վոր ասածու կամքն ա:

ՄԱՂԱՔ.— Ի՞նչ ասածու կամք: Ամեն մարդ լավի յե-  
տեվից ե ընկած. իսկ թե վո՞րն ե լավը, ո՞վ  
կարող ե ասել: Յեվ այդպես ահա կյանքում  
խաբխախում ենք կույրերի նման:

ՄԱԴԱԹ.— Զուր ես եղպես ասում: Յես քեզ դյուղա-  
ցու խոսքով կասեմ. փորձանքն եմ չի, վոր ցո-  
րենի մեջ մրիկ կա, այլ ե՛ն, վոր վոչ ցորեն կա,  
վոչ մրիկ: Եղպես:

ՄԱՂԱՔ.— Այդ այդպես ե:

ՄԱԴԱԹ.— Դարդ անելու ի՞նչ ունես, Մանանը հետդ  
ա: Անցածն անցած ա: Ուրեմն ապրեք միտ-  
սին առաջվա նման... սիրով ու հեշտ:  
Վարագույրի յետեվը լավում ե հեծկտաց:

ՄԱՂԱՔ.— Մանաօն, ի՞նչ պատահեց քեզ:

ՄԱՆԱՆ.— Վճռեցիք ե՛լի: (Արտավսում ե: Տղամար-  
դիկ անգիտակ նայում են միմիանց, ապա  
դառնում են վարագույրի կողմը, սպասողա-  
կան):

ՄԱԴԱԹ.— Մանան, ինչի՞ յես լաց ըլում:

## Տ Ե Ս Ի Լ 6

ՄԱՆԱՆ.— (Դուրս ե գալիս վարագույրի յետեվից,  
մաքրելով արցունքները: Նրա ձայնն արդեն  
հաստատուն ե ու վնդական: Մաղափին) Լսի՞ր  
ինչ եմ ասում. յես քեզ հետ չեմ ապրի:

ՄԱՂԱՔ.— Զեռ ապրի՞:

ՄԱԴԱԹ.— Եզ վո՞նց:

ՄԱՆԱՆ.— Կար ժամանակ, վոր յես գրո եյի, առանց  
մեկի. ում մոտ վոր կանգնեցնեյին, նրա հետ  
ել պիտի ապրեյի: Իսկ այժմ, բավական ե:  
Առանց իմ կամքի այլևս ինձ վոչ վոք չի կա-  
րող հարկադրել:

ՄԱՂԱՔ.— Հապա՞ ինչո՞ւ եյիր ասում, վոր նրանից  
բաժանվեմ: Մոռացա՞ր:

ՄԱՆԱՆ.— Այն ժամանակ այդպես եյի ասում, իսկ  
այժմ՝ այսպես:

ՄԱՂԱՔ.— Դու ինչ ե, ինձ վրա ծիծաղո՞ւմ ե՞ս:

ՄԱՆԱՆ.— Միտքս փոխեցի, ուրիշ վոչինչ: Մենակ  
եմ ապրելու:

ՄԱՂԱՔ.— Ուզում ես քո քեֆին ազատ կյանք անե՞լ:

ՄԱՆԱՆ.— Մի՛ վախեցիր, ձեռքից-ձեռք չեմ ընկնի:  
Յես քո Սիրանը չե՛մ: Գիտեմ ինչպես ինձ  
պահպանել: Դրա դուխը չունեմ: Հասկանո՞ւմ  
ես: Այդ մասին չե՛մ մտածում ամենեվին:  
Յես նոր եմ միայն սկսել ապրել, կյանքի մի  
փոքրիկ կտոր եմ միայն տեսել... Նորից կաթ-  
սաների ու թաթաշորերի յետեվի՞ց ընկնեմ...  
Կրկին դերի դառնամ քեզ: Վո՞չ, այլևս բա-  
վական ե:

ՄԱԴԱԹ.— Թո՛ւ, ցնդած: Կամ յես եմ հիմար, կամ դու  
յես անխելք: Բան չեմ հասկանում... Խելքդ  
կորցրե՞լ ես ինչ ա:

ՄԱՆԱՆ.— Յես ուզում եմ ճանաչել կյանքը. ճանաչել  
ամբողջապես, հասկացա՞ր: Ե՛լ, մի՞թե ձեզ  
կարելի յե բացատրել, մի՞թե դուք կհասկա-  
նա՞ք:

ՄԱԴԱԹ.— Փորձություն ա, ճշմարիտ խոսք, փորձու-  
թյուն... Վաթսուն տարի ապրում եմ ես աչ-  
խարքում, բայց ես տեսակ բան չեմ լսել: Մա-  
ղաք, դու բան հասկանո՞ւմ ես:

**ՄԱՂԱՔ.**— Յես հասկանում եմ, ամեն բան հասկանում եմ: Դա նշանակում է ակախվության տեսակի, այսինքն՝ նոր պեսակի կյանք... Յես նրան պատասխարեցի, անկյուն ավելի, աշխատանք գտա, նրա համար ընտանիքս քայքայեցի... Ես ինքն եր ինձ այդ բանին հարկադրում...

**ՄԱՆԱՆ.**— Մաղաք, ինչո՞ւ ես պուտ խոսում:

**ՄԱՂԱՔ.**— Նրա պատճառով տանից դուրս արեցի, իսկ փոխարենը ահա թե ինչ եմ ստանում (Չեռֆոլ հուսահատական նշան է անում):

**ՄԱՂԱՔ.**— Տե՛ս, կհամբերեմ-կհամբերեմ ու մեկ ել անսար գոտիս խոց կանեմ... ասա՛ղիս նման կբցեմ փոտիս տակ ու կջարգեմ, վրնց վոր հարկն ա...

**ՄԱՆԱՆ.**— Ի՞նչ: (Մոտենում է նրան, ատամները սեղ-ված) Ի՞նչ կջարգես: Հապա՛, համարձակ-վի՛ր... Դե, փորձի՛ր...

**ՄԱՂԱՔ.**— (Շփաթված յետ-յետ է գնում) Նալլա՛թ քեզ չար սատանա...

**ՄԱՆԱՆ.**— Մոխրե՞լ եք մեզ փախաի տեղ դնել... Յես քեզ ջարդելի ցույց կաամ... (Մաղաֆիմ) Դու հրեն կուշտուրական ես դարձել, ատամներդ ես մաքրում, թատրոն ես դնում, իսկ ներսի՞ց ինչ ես: Ուրեմն ամեն ինչ ատաղձիա նման ե՞լի: Բռունցքներով հարձակվում ես կնոջ վրա: Ե՛րխ, դու: Առաջ մի ինքդ մարդ դարձիր, հետո միա-սին ապրելու մասին կխոսենք:

**ՄԱՂԱՔ.**— Ա՛յ քեզ նզոված: Փորձա՞նք ա գլխիս:

**ՄԱՆԱՆ.**— Դե լավ: Դու, հայրիկ, ինչքան ուզում ես, հայհոյիր, բայց ճաշին արի ակումբ: Տոնի առթիվ կհյուրասիրենք քեզ կոմունայում: Յես տալոն կվերցնեմ: Այնտեղ կպատմես գյուղի անց ու դարձից: Յես ել, ինչով հնարա-վոր ե, կողնեմ:

**ՄԱՂԱՔ.**— Ա՛յ, չնորհակալ եմ աղջիկս... եզ մեկը լավ ա:

**ՄԱՂԱՔ.**— Հիմի ո՞ւր ես վազ տալիս:

**ՄԱՆԱՆ.**— Ակումբը դո՞ւ ես զարդարելու:

**ՄԱՂԱՔ.**— Յես կզարդարեյի... Բայց քո տկումբը...

**ՄԱՆԱՆ.**— Հը՞, ուրիշ ի՞նչ կասես:

**ՄԱՂԱՔ.**— Հենքարար Գարեգինի տունն է: Նրա համար չե՞ս զուգվել-զարդարվել:

**ՄԱՆԱՆ.**— (Նայում է յերկա՛ր ծաղրական: Թափախա-րում է գլուխը) Հիմա՛ր ես դու... Ինձ համար այժմ բոլոր տղամարդիկ, այ (ցույց է տալիս, վոր քֆում է և վոտֆոլ տրորում) թե ինչպես են հարկավոր. հասկացա՞ր: Տեսնում եմ, վոր բան հասկացար: Սաղայն հարկավոր է մի բան լավ հասկանա, ա՛յ, այստեղդ լցնես, վոր յես այնպես, ինչպես սպրում եյի առաջ, այլես չեմ սպրի: Յես ինքս ի՞մ ուժերով եմ վորքի կանգնել, ինքս ի՞մ ուժերով ել կամենում եմ ապրել կյանքում. ի՞մ կամքով, ի՞մ ճանապարհով: Յեմ վո՛չ վո՛ք չի կարող այլես չեղիլ ինձ իմ ճանապարհից: Ահա թե ինչը հասկացիր... (Գնում է: Տղամարդիկ շփոթված նայում են նախ նրա յետեվից, ապա՛ միմիանց):

## Տ Ե Ս Ի Լ 7

**ՄԱՂԱՔ.**— Եդ, վոր, լաղաթին ուտացրեց... Կյանքում չատ բան եյի տեսել, բայց վոր կնիկն ես տեսալ իշխանություն վերցնի, եդ մե՛կը չեյի իմացել: Սա ի՞նչ բան ա: Աշխարհի վե՞րջն ա... Փորձությո՞ւն ա...

**ՄԱՂԱՔ.**— Ե՛րխ, աներ ջան... Ինչպես ասում եյիր, այնպես ել յեղավ, վոչ ցորեն կա, վոչ մրիկ...

**ՄԱՂԱՔ.**— Հալիվոր մարդիկ դուր տեղը չե՛, վոր ասում են, թե պատահում ա, գերանդին քար ա կտարում: Յես, վոր ինչքան պինդ եմ... անի-ծածը ինձ ել կտարեց: Նադացրեց...

**ՄԱՂԱՔ.**— Հիմի ի՞նչ անենք:

ՄԱԴԱԹ.— Խեղճ բան չի կտրում: Ինչպես երեւում ա,  
հարկավոր ա... ընենց... հոժարութեամբ...  
Հը՞, ինչ կասես... Պատիվ անենք... Գնանք  
ակումբ:

ՄԱՂԱՔ.— (Դառնուք յամբ) ճարներս ի՞նչ, աներ  
ջան... Հիմի մենք նրան ի՞նչ կարող ենք անել,  
զայի պատիվ տալուց... Գնանք:

Թեվ-Թեվի, դուրս եմ գնում:

Վ Ա Ր Ա Ի Ո Ւ Յ Ր



ԳԻՆԸ 40 ԿՈՊ. (3 մ.)

276.



Ա. ГЛЕБОВ  
СВОИМИ СИЛАМИ

Пьеса

Госиздат ССРА. Эривань, 1931